



ԱՆՈՒՇԱՎԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր: «Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարասկզբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ռուս պատմագրական և մշակութային կապեր: Հեղինակ է 21 մենագրության ու ժողովածուի, ավելի քան 250 հոդվածների և հրապարակումների:

АНУШАВАН ЗАКАРЯН

Доктор филологических наук. Главный редактор «Историко- филологического журнала», старший научный сотрудник отдела искусства армянской Диаспоры и международных связей Института искусств НАН РА. Научные интересы: вопросы первой четверти армянской действительности XX века, Армянский вопрос и Геноцид армян, армяно-русские историко-литературные и культурные связи. Автор 21 монографии и сборников, более 250 статей и публикаций.

ANUSHAVAN ZAKARYAN

Doctor of Sciences in Philology, Editor-in-Chief of the “Historical-Philological Journal”, Senior Researcher at the Department of Arts of the Armenian Diaspora and International Relations at the NAS RA Institute of Arts. Scientific interests: issues of the first quarter of the Armenian reality of the 20th century, the Armenian Question and the Armenian Genocide, Armenian-Russian historical-literary and cultural ties. Author of 21 monographs and collections, over 250 articles and publications.

ISBN 978-9939-0-3998-5



9 789939 039985

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՉԱՔԱՐՅԱՆ



ՕՍԻԿ ՄԱՆՂԵԼՇՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ
ԾՆՆԴՅԱՆ 130-ԱՄՅԱԿԻ
ԱՌԹԻՎ

К 130 - ЛЕТИЮ
СО ДНЯ РОЖДЕНИЯ
ОСИПА МАНДЕЛЬШТАМА

TO THE 130TH BIRTH
ANNIVERSARY
OF OSIP MANDELSTAM



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

АНУШАВАН ЗАКАРЯН

ОСИП МАНДЕЛЬШТАМ:
ПОЭТ И АРМЕНИЯ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

ANUSHAVAN ZAKARYAN

OSIP MANDELSTAM:
THE POET AND ARMENIA

ЕРЕВАН 2022 YEREVAN

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱԲԱՐՅԱՆ

ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄ.
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏԴ 821.161.1.0

ԳՄԴ 83.3(2)

Ձ 431

ՏՊԱԳՐՎՈՒՄ է
ՀՀ ԳԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎ.
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՄԲ


Զաքարյան Անուշավան
Ձ 431 Օսիպ Մանդելշտամ. բանաստեղծը և Հայաստանը / Ա. Զաքարյան — Երևան: Հեղինակային հրատարակություն, 2022. — 82 էջ:

Աշխատության մեջ առաջին անգամ հայերենով ներկայացված են մեծանուն ռուս բանաստեղծ, արվեստի տեսաբան, թարգմանիչ Օսիպ Հմիլի Մանդելշտամի (1891–1938) կյանքը, գործունեությունը, ստեղծագործական ուղին և նրա առնչությունները Հայաստանի հետ:

Գիրքը նախատեսված է ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 821.161.1.0

ԳՄԴ 83.3(2)



ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս դարի ծնունդից հաշված՝ երեսունմեկ թվին
Վերադարձա, չէ՝ — կարգա. բռնություն
Ետ բերվեցի բուդդիստական Մոսկվա:
Իսկ մինչ այդ տեսա, այնուամենայնիվ,
Բիբլիական սփռոցներով հարուստ Արարատը,
Երկու հարյուր օր անցկացրի շաբաթապահ երկրում,
Որ կոչի Հայաստան¹:

Ռուս (ծագումով՝ հրեա) երևելի բանաստեղծ, արվեստի տեսաբան, թարգմանիչ Օսիպ Էմիլի Մանդելշտամն առանձնահատուկ տեղ ունի խորհրդային գրականության պատմության անդաստանում: 1920–1930-ական թվականներին լինելով անկուսակցական ու հիմնականում գրական որևէ միավորման կազմում չլինելով՝ ճաշակել է այն բոլոր դառնությունները, որ վիճակվեց իր սերնդակից մտավորականներին և խորհրդային երկրի շարքային բազում քաղաքացիներին. հալածվեց, երկու անգամ ձերբակալվեց, աքսորվեց, որտեղ էլ մահացավ: «Նա արտասովոր ..., ծանր ..., սրտառուչ և հանճարեղ մարդ էր»², — այսպես է Օ. Մանդելշտամին բնութագրել ուսուցիչ անվանի գրող և գրականագետ Վ. Շկլովսկին: Իսկ մեծանուն

¹ Օ. Մանդելշտամ. Բանաստեղծություններ, արձակ: Թարգմ. ուսերենից՝ Հրաչյա Բեյլերյանի, Երևան, 2012, էջ 151: Այս գրքից, մեր հոդվածից [«Օսիպ Մանդելշտամ. բանաստեղծը և ժամանակը: Հայաստանը նրա կյանքում».— «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 2021, № 2, էջ 46–87] և հանրագիտարանային բնույթի մի քանի նյութից բացի, Օ. Մանդելշտամի կյանքի, գործունեության ու ստեղծագործական ուղու մասին հայերենով հրապարակումներ չկան. այդ բացը լրացնելու է գալիս սույն աշխատանքը:

² Օ. Мандельштам. Шум времени: стихотворения, проза. Иркутск, 1991, с. 274–275.

բանաստեղծ Ա. Ախմատովան իր հուշերում հետևյալ գրառումն է կատարել. «Դա (Օ. Մանդելշտամը – Ա. Զ.) մի մարդ էր հոգով թափառաշրջիկ՝ այդ բառի ամենաբարձր իմաստով և poete maudit par excellence (ամենից առաջ անիծված բանաստեղծ), ինչը և ապացուցեց իր կենսագրությունը: Նրան մշտապես ձգում էին հարավը, ծովը, նոր վայրերը: Իսկ Հայաստանի նկատմամբ նրա խենթացնող սիրահարվածության վկայությունն անմահ բանաստեղծությունների շարքն է»³:

Օ. Մանդելշտամի անունը մեծապես կապված է Հայաստան երկրի ու հայ ժողովրդի հետ: Հայաստանում ճանապարհորդելը ճակատագրական դարձավ նրա համար, քանզի հետագա կարճատև կյանքը շողկապված մնաց Հայաստանի, հայ մշակույթի հետ: Կապ, որ ուռա բանաստեղծը շատ թանկ էր գնահատում:

Օ. Մանդելշտամի կյանքի, գործունեության ու ստեղծագործությունների ուսումնասիրության, Հայաստանի հետ առնչություններին վերաբերող հարուստ գրականություն կա⁴: Վերջինը, սակայն,

³ Н. А. Гончар-Ханджян. Мандельштам и Армения. – О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки. Вступ. статья, сост., коммент. Н. А. Гончар-Ханджян. Ереван, 1989, с. 6.

⁴ Այդ մասին տե՛ս Խրոկոստի և Բեստրախի խոսքերը. «Մանդելշտամի 130-ամյակը: Կյանք, ստեղծագործությունները» (Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից կազմակերպված «Մանդելշտամի 130-ամյակը» միջոցառումների շրջանակում): «Լիտերատուրնայա» (Մ.), № 1–2, 13–19 հունվարի 2021, էջ 13 (հարցազրույցում թվարկված են Օ. Մանդելշտամի մասին հրատարակված առավել կարևոր աշխատությունները): Жизнь и творчество О. Э. Мандельштама. Воспоминания, материалы к биографии, «новые стихи», комментарии, исследования. Воронеж, 1990; Слово и судьба. Осип Мандельштам: исследования и материалы. М., 1991; Смерть и бессмертие поэта. Материалы международной научной конференции, посвященной 60-летию со дня гибели О. Э. Мандельштама (Москва, 28–29 декабря 1998 года). М., 2001; О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки; О. Лекманов. Жизнь Осипа Мандельштама. Документальное повествование. СПб., 2003; А. Г. Мец.

Հիմնականում վերաբերում է Հայաստանին նվիրված բանաստեղծությունների շարքին և «Ճանապարհորդություն Հայաստան» արձակ գործին: Չեն մանրամասնվել գրապատմական կարևոր իրողություններ, Հայաստան կատարած այցելության, հայ ժողովրդի կյանքին վերաբերող իրադարձությունների նկատմամբ նրա մոտեցումների խորքային դրդապատճառներն ու նախադրյալները և այլն:

Осип Мандельштам и его время. Анализ текстов. СПб., 2005; *Օ. Մանդելշտամ. Նշվ. գիրքը*, В. Головин. «Над Курюю в ущелье балконном». Осип Мандельштам. Тбилиси, 2016. *Մնացյալները տե՛ս մեր գրքի հաջորդ էջերում՝ ծանոթագրություններում:*

Օ. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ ԿՅԱՆՔԻ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Բանաստեղծը ծնվել է 1891 թ. հունվարի 3-ին (15-ին) Վարչավայրում վաճառականի ընտանիքում: 1907 թ. ավարտել է Պետերբուրգի Տեխնիկական ուսումնարանը: Ծնողներն անհանգստանալով իրենց որդու «արմատական մտայնություններով»՝ հարում էր էսեներին, սեպտեմբերին նրան ուղարկում են Փարիզ. հոկտեմբերից 1908-ի կեսերն ուսանել է Սորբոնի համալսարանի բանասիրության ֆակուլտետում: Ամռանն ընտանիքի հետ ճանապարհորդել է Եվրոպայում՝ եղել է Ֆրանսիայում, Շվեյցարիայում՝ մեկօրյա այցով միայնակ՝ Ջենովայում: 1909-ի աշնանից 1910-ի գարուն՝ երկու կիսամյակ, ռոմանական բանասիրություն, մասնավորապես հին ֆրանսերեն է ուսումնասիրել Հայդելբերգի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի ռոմանո-գերմանական բաժնում: 1910-ի գարնան սկզբին կարճ ժամանակով ճանապարհորդել է Իտալիայում ու հարավային Շվեյցարիայում, հուլիսի 21-ից հոկտեմբերի կեսերին էլ ապրել է Բեռլինի Ցեղենդորֆ արվարձանում: Նկատենք, որ այդ ճանապարհորդությունների արձագանքը՝ ճարտարապետական տպավորություններ, մասնավորապես եվրոպական գոթական, հնչում է նրա ամբողջ պոեզիայում: 1911 թ. մայիսի 14-ին տեղի է ունեցել Մանդելշտամի մկրտությունը Վիբորգի մեթոդիստական մատուռում: «Ծագումով հրեա մարդու համար դա նախ և առաջ նշանակում էր, թե հուդայական էլ»⁵: Նույն թվականի սեպտեմբերի 10-ին ընդունվել է

⁵ Ձգավալվելով՝ նկատենք, որ «Մանդելշտամի մոտ քրիստոնեությունն ընկած էր հիմնականում իր աշխարհընկալման մեջ, բայց կրում էր ավելի շատ փիլիսոփայական, քան կենցաղային բնույթ» (Н. Мандельштам. Вторая книга: воспоминания. Подготовка текста, предислов., примеч. М. К. Поливанова. М., 1990, с. 43): Քրիստոնեությանը և հուդայականությանը վերաբերող Օ. Մանդելշտամի մոտեցումների և ուղա բանասեր ու մշակութաբան Ս. Ավերինցևի՝ դրանց մեկնաբանությամբ

Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի ռումանական լեզուների բաժինը, բայց լրիվ դասընթացը չի ավարտել:

1909 թ. Օ. Մանդելշտամը ծանոթացել է բանաստեղծներ Վյաչ. Իվանովի և Ի. Անենեակու հետ ու ընդգրկվել «Ապոլլոն» հանդեսի շուրջ համախմբված բանաստեղծների շրջանակի մեջ: Այս ամսագրում էլ տպագրվել է (1910, № 9) Մանդելշտամի առաջին հինգ բանաստեղծությունը, որոնցում նկատելի է սիմվոլիզմի ազդեցությունը: 1912-ին ժամանակի անվանի գրողները՝ Ն. Գոմիլյովը, Ս. Գորոդեցկին, Ա. Ախմատովան, Օ. Մանդելշտամը, Մ. Զենկելիչը, Մ. Կոլզմինը, Վ. Նարբուտը և այլք միավորվել են «Лех поэтов» («Բանաստեղծների համաքաղություն») գրական միավորման մեջ, հրապարակել իրենց հավատո հանգանակը, որով 1913 թ. ռուսական պոեզիայում, ի հակադրություն խորհրդապաշտությունը, ձևավորվել է գրական մոդեռնիստական նոր հոսանքը՝ ակմեիզմը: Այդ շրջանի Մանդելշտամի բանաստեղծություններն ամփոփված են նրա հոր միջոցներով, 600 օրինակ տպաքանակով հրատարակված «Քար» ժողովածուում (1913):

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին՝ 1914 թ. դեկտեմբերին, նա անհաջող փորձ է անում տեղավորվելու գինվորական գնացքում որպես հիվանդապահ, ապա երկու տարի համագործակցում է Քաղաքների միություն հետ: Հոկտեմբերյան հեղափոխությունն ընդունել է խանդավառությամբ, բայց մնացել է «ապաքաղաքական» բանաստեղծ: 1918–1919 թթ. աշխատել է Ա. Լուսա-չարսկու գլխավորած լուսավորության կոմիսարիատում, կուլտուր-լուսավորական այլ հիմնարկներում:

1919 թ. մայիսի 1-ին ծանոթացել է իր կյանքի ապագա ընկերոջ՝ Նադեժդա Մանդելշտամի (ծագումով՝ հրեա, օրիորդական ազգանունը՝ Խազիևա, 1899–1980)⁶ հետ: Նրանց բաժանումը տևել է մե-

յունների մասին տե՛ս Ս. Ավեդիսյան. Օսիպ Մանդելշտամի ճակատագիրն ու արվեստը. – Օ. Մանդելշտամ. Նշվ. գիրքը, էջ 22–25, նաև՝ Օ. Лекманов. Նշվ. աշխ., էջ 40–41:

⁶ Առաջ անցնելով՝ նշենք, որ Ն. Մանդելշտամը հետագայում իր «Հուշեր»-ում (1970) ներկայացրել է ամուսնու ողբերգական ճակատա-

կուկես տարի. այդ ընթացքում Օ. Մանդելշտամը մեկնել է Ղրիմ 1920 թ. մարտից հուլիս ամիսը Կոկտեբելում ապրել է բանաստեղծ Մ. Վոլոշինի տանը, հայտնի վիճաբանությունից հետո՝ մեկնել է Վրաստան՝ Բաթում, Թիֆլիս, այնուհետև՝ Մոսկվա, Պետրոգրադ, որտեղ ապրել է Արվեստների տանը: Մանդելշտամները 1921 թ. եղել են Անդրկովկասում Բաքվում և Թիֆլիսում: 1922 թ. մարտին հաստատվել են Մոսկվայում. 1922–1923-ին ապրել են Գերցենի տանը⁸ (այժմ Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի շենք)՝ գրողների հանրակացարանում՝ «ցոփական առանձնատանը», որտեղ, ի դեպ, տեղակայված էին նաև գրական մի շարք կազմակերպություններ, գրողների խորտկարանը: Մանդելշտամին հատկացրել են երկրորդ կարգի «ակադեմիական փայաբաժին»: Դեպքերի բերումով, սակայն, բանաստեղծը թողել է գրողական «ետնախորշը», 1923–1924 թթ. ձմեռն անցկացրել է վարձակալած սենյակում՝ Յակիմանկա փողոցում: Այնուհետև 1924–1927 թթ., ապրել է Լենինգրադում և Ցարսկոյե Սելոյում:

Գրական խմբավորումների միջև ընթացող անգիշտում պայքարի ժամանակաշրջանում Մանդելշտամը պահել է անկախ կարգավիճակ, որը հանգեցրել է գրականության մեջ նրա մեկուսացմանը, «ուղեկից-գրողի» նկատմամբ խուլ անհանդուրժողականություն: 1924 թ. գրած «Ոչ, ես չեմ եղել երբեք ոչ մեկին ժամանակակից» տողով սկսվող «Բանաստեղծությունների առաջին տողը բազմիցս «ի ցույց է դրվել» Մանդելշտամին մեղադրելու համար, որպես կյանքից կտրված ապա-

գիրը՝ երկու ձեռքակալությունը և աքսորի տարիները, «Երկրորդ գրքում» (1972)՝ իր կյանքը բանաստեղծի հետ, վերջինիս հոգեբանական ու ստեղծագործական դիմանկարը, 1920–1930-ական թվականների սկզբի գրական միջավայրը և այլն: Մեր գրքում մեծապես օգտագործել ենք նրա մտքերը, գաղափարներն ու ձևակերպումները, որոնք, անկասկած, եղել են Օ. Մանդելշտամի համոզմունքները:

⁷ Այդ մասին մանրամասն տե՛ս Օ. Лекманов. Նշվ. աշխ., էջ 89–90:

⁸ Сте́н Л. Видго́ф. «Но люблю мою курву–Москву»: Осип Мандельштам: поэт и город. Книга–экскурсия. М., 2012, с. 117–186. Այս էջերում հանգամանորեն ներկայացված են Մոսկվայում ապրելու այդ տարիների Օ. Մանդելշտամի կյանքն ու գործունեությունը:

քաղաքական տարրի»⁹: 1921–1925 թթ. բանաստեղծությունները ներկայանում են «մերժվածության» սուր զգացումով: Այդ շրջանին են վերաբերում բանաստեղծի «Tristia» (1922, «Երկրորդ գիրք» վերնագրով 1923) և «Ժամանակի աղմուկը» (ինքնակենսագրական պատմվածքներ, 1925) ժողովածուները: Դրանց հաջորդում են «Բանաստեղծություններ» (1928) ժողովածուն (գիրքը լույս է տեսել Կոմիտերնի նախագահ և «Պրավդա» թերթի գլխավոր խմբագիր Ն. Բուխարինի¹⁰ աջակցությամբ. գրողի կենդանության օրոք հրատա-

⁹ Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 357:

¹⁰ Ռուս քաղաքական ու պետական գործիչ, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս, անհատի պաշտամունքի գոհ Ն. Բուխարինը (1888–1938) մեծապես օգնել և օժանդակել է ժամանակի մտավորականությանը: Ահա թե ինչ է այդ մասին գրել նրա ամերիկացի կենսագիր Ստիվեն Կոէնը. «Նա (Բուխարինը – Ա. Զ.) նպաստել է գեղարվեստական ու գիտական նվաճումների զարգացմանը և կուսակցական առաջնորդների մեջ հազվադեպ բացառություն էր, որ լավ հարաբերությունների մեջ էր այնպիսի տարբեր մարդկանց հետ, ինչպիսիք էին Օսիպ Մանդելշտամը, Միխայիլ Պոկրովսկին, Մաքսիմ Գորկին և Իվան Պավլովը: ... Անկուսակցական մտավորականները, ինչպես տեխնիկական, այնպես էլ ստեղծագործական ... պատճառ չունեին նրանից վախենալու: Նա ոչ միայն պաշտպանում էր ոմանց, օրինակ, բանաստեղծ Օսիպ Մանդելշտամին, այլև հանդուրժողաբար էր վերաբերում նրանց գործունեությանը և, եթե ոչ որպես գաղափարախոս, ապա որպես մարդ գնահատում էր նրանց ստեղծագործությունը» (С. К о э н. Бухарин. Политическая биография. 1888–1938. Пер. с англ. Е. Четвергова, Ю. Четвергова, В. Козловского. Общая редакция и послесловие д. и. н. И. Е. Горелова. М., 1992, с. 280): Ի դեպ, 1927 թ. օգոստոսի 10-ին Ն. Բուխարինը, հավանաբար, Օ. Մանդելշտամի խնդրանքով դիմել է Պետհրատի խորհրդի նախագահ Արտաշես Խալաթովին հետևյալ հարցով. «Դուք, հավանաբար, գիտեք մեր խոշորագույն գրչի վարպետներից մեկին՝ բանաստեղծ Օ. է. Մանդելշտամին: Նրան չեն թողնում հրատարակվի Պետհրատում: Այնինչ, իմ խորին համոզմամբ, դա սխալ է: Զիչտ է, նա ամենևին «մասսայական» բանաստեղծ չէ: Բայց նա ունի և պետք է ունենա իր նշանակալից տեղը մեր գրականության մեջ: Այս նամակը Ձեզ գրում եմ privati, քանի որ, կարծում եմ, որ Դուք կհասկանաք իմ մտադրությունները etc. Շատ կխնդրեի Ձեզ «մի

րակված վերջին ժողովածուն է) ու «Եգիպտական դրոշմանիշ» (1928) վիպակը, որոնք առանձնանում են մտավորականի հոգևոր ճգնաժամի մասին մտորումներով, մտավորական, ով հեղափոխությունից առաջ ապրում էր «կուլտուրական ռենտայով»:

Նկատենք, սակայն, որ 1925–1929 թթ. Մանդելշտամը «լուել է»։ Հինգ տարի ոչ մի բանաստեղծություն չի գրել, հիմնականում խմբագրել է գրքեր, հանդես է եկել շուրջ 25 գրախոսականներով (գերմանացի ու ֆրանսիացի հեղինակների գրքերի), զբաղվել է Վ. Սկոտի, Շարլ դը Կոստերի, Ժ. Ռոմենի, Ժ. Դյուլամելի, Ռ. Ստիվենսոնի և այլ հեղինակների գործերից կատարած թարգմանություններով (տիրապետել է մի քանի լեզուների), գրել է Պ. Զառաբակին, Ֆ. Վիյոնին, Ա. Շենիերին նվիրված ուսումնասիրություններ: Տեսական արժեք են ներկայացնում «Բառ և մշակույթ» ու «Բառի բնության մասին» (տպագրվել են «Պոեզիայի մասին» ժողովածուի մեջ, 1928) հոդվածները:

Բանաստեղծի դեմ, սակայն, չարակամներն ու քաղքենի միջավայրը դավեր են լարում՝ անգամ քաղաքական երանգավորումներով: Մանդելշտամի «Հանգիստ» կյանքը խաթարվում է հատկապես գրական գործիչ և թարգմանիչ Ա. Գորնֆելդի հետ տեղի ունեցած հայտնի ընդհարման¹¹ ու նրա դեմ 1929 թ. մայիսի 7-ին «Литератур-

քանի ըուպե» գրուցել Օ. Է. Մանդելշտամի հետ կամ ինչ-որ այլ կերպ նրան ցուցաբերեք Ձեր լուսավորյալ աջակցությունը: Ձեր Ն. Բուխարին» (Օ. Лекманов. Նշվ. աշխ., էջ 123): Այս նամակից հետո գործին ընթացք է տրվում և «Բանաստեղծություններ»-ի ժողովածուն տպագրվում է: Հավելենք նաև՝ 1928 թ., երբ Մանդելշտամը տեղեկացել է, որ ձերբակալվել են բանկային ոլորտից մի քանի աշխատակիցներ և որ նրանց գնդակահարություն է սպառնում, դիմել է Բուխարինին ու հենց նոր լույս տեսած իր վերոգրյալ ժողովածուն հետևյալ ընծայագրով ուղարկել է նրան. «... այս գրքի ամեն մի տողը խոսում է այն բանի դեմ, ինչը որ դուք մտադիր եք անել ...» (Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 175: Հմմտ. Ս. Ավերիցև. Նշվ. հոդվ., էջ 34): Դատավճիռը չեղյալ է հայտարարվել:

¹¹ 1928 թ. «Земля и фабрика» հրատարակչությունը տպագրել է Շարլ դը Կոստերի «Թիլ Ուլենշպիգել» վեպը, որի տիտղոսաթերթին,

ная газета»-ում տպագրված Դ. Զասլավսկու՝ «Համեստ գրագողություն կամ սանձարձակ խալտուրա» վերտառությունը ֆելիետոնի պատճառով: Այդ ամենից դրդված՝ Օ. Մանդելշտամը դուրս է եկել Սովետական միացյալ գրողների ֆեդերացիայից, թեև նրան պաշտպանել են մի խումբ խոշոր արձակագիրներ ու բանաստեղծներ՝ բողոքի նամակ ուղարկելով թերթին, միաժամանակ դատարանն էլ մերժել է բանաստեղծին ներկայացված մեղադրանքը¹²: Այնուամենայնիվ, նրան 1930-ականների սկզբից «սկսում են կանչել հարցաքննությունների՝ իբր նույն այդ գործնական պատմության կապակցությամբ, սակայն հարցեր տալով նաև «սպիտակների մոտ» (Ղրիմում 1919 թ. – Ա. Զ.) լինելու ժամանակաշրջանից»¹³: Գործը հասարակական մեծ հնչողություն է ստանում. 1930 թ. սկզբին այն քաղաքական երանգավորումներով դառնում է ՀամԿ(բ)Կ-ի Կենտրոնական վերահսկիչ Հանձնաժողովի քննության առարկան¹⁴:

... 1929 թ. աշնանից 1930 թ. փետրվար ամիսը Օ. Մանդելշտամն աշխատել է «Московский комсомолец» թերթում, վարել է «գրական էջ» և զբաղվել է երիտասարդ բանաստեղծներով: Փետրվարին թերթի խմբագրության գործերը ստուգող Հանձնաժողովն

հրատարակչության անվտուրության պատճառով, Մանդելշտամը ներկայացվել է որպես թարգմանիչ, այն դեպքում, երբ Ա. Գորնֆելդի ու Վ. Կարյակինի թարգմանություններն ընդամենը մշակել ու խմբագրել էր: Այդ մասին Գորնֆելդին առաջինը հայտնում է Մանդելշտամը և պահանջում հրատարակչության հերքումը, որը հաստատում է՝ դա ընդամենը վրիպակ է: Սակայն Գորնֆելդը մամուլում հանդես է գալիս մեղադրանքով, Մանդելշտամը պատասխանում է և այդպես շարունակ (տե՛ս Օ. Մանդելշտամ. Նշվ. գիրքը, էջ 370): Ս. Ավերինցևի պատկերավոր խոսքով՝ «Այդ կոնֆլիկտի առարկան ինքնին ճիճու կերած խնձոր էլ չարժե» (Ս. Ավերինցև. Նշվ. հոդվ., էջ 35):

¹² Այդ մասին մանրամասն տե՛ս Օ. Лекманов. Նշվ., աշխ., էջ 129–136: Նաև՝ Н. Я. Мандельштам. Воспоминания. М., 1989, с. 414; Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 195–197:

¹³ Ս. Ավերինցև. Նշվ. հոդվ., էջ 35:

¹⁴ Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 414.

աշխատակից Օ. Մանդելշտամին տվել է հետևյալ բնութագրերը. «Կարելի է օգտագործել որպես մասնագետ, բայց ղեկավարության տակ»¹⁵: Իբրև բողոքի նշան՝ նա հեռացել է խմբագրությունից և որոշ ժամանակ աշխատակցել «Вечерная Москва» թերթին:

Բանաստեղծը ծանր ապրումների մեջ էր, և հանկարծ «հրաշք» է կատարվում. շիկացող միջնորդատն ու շնչահեղձ անող մոսկովյան միջավայրը փոփոխվում է Ն. Բուխարինի հովանավորությամբ. նրա շնորհիվ 1930 թ. մայիսից մինչև հոկտեմբերի սկիզբը բանաստեղծն ապրել է Հայաստանում: Գալով Թիֆլիս՝ տեական ընդմիջումից հետո, սկսում է բանաստեղծություններ գրել: Կենդանության օրոք տպագրված նրա վերջին գործերն են «Հայաստան» բանաստեղծությունների շարքը և «Ճանապարհորդություն Հայաստան» էսսեն: «Մենք վերադարձանք Հայաստանից և ամենից առաջ վերանվանեցինք մեր ընկերուհուն (նկատի ունի Աննա Ախմատովային – Ա. Զ.), – գրում է Ն. Մանդելշտամը: – Նախորդ բոլոր անունները մեզ թվացին անհամ. Աննուշկա, Անյուտա, Աննա Անդրեևնա: Վերջինը, իհարկե, միշտ մնաց: ... Բայց նոր անունը կապվ նրան, մինչև վերջին օրերը ես նրան անվանում էի այդ նոր անունով, ինչպես նա ստորագրում էր նամակներում Անուշ: Անուշ անունը մեզ հիշեցնում էր Հայաստանը, որի մասին Մանդելշտամը, ինչպես նա գրում է ամեն տեղ, էլի դադարում երազել»¹⁶:

Անդրկովկասից վերադառնալով Մոսկվա, այնուհետև Մանդելշտամները փորձել են հանգրվանել Լենինգրադում. կրկին Ն. Բուխարինի օգնությամբ ուղեգիր են ստացել և մինչև 1931 թ. հունվարի 7-ը ապրել են հին Պետերգոֆում՝ Գիտնականների կե-

¹⁵ О. Лекманов. Նշվ. աշխ., էջ 138–139: Ինչպես վկայում է Ն. Մանդելշտամը, այդ «բարյացակամ» բնութագրում ասվում էր, որ նա պատկանում է այն մտավորականների շարքին, որոնց կարելի է թույլ տալ աշխատելու, բայց կուսակցական ղեկավարության հսկողության տակ: Բնութագիրն ամենևին դուր չի եկել Մանդելշտամին (Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 432):

¹⁶ О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с. 77.

ցուլթյունը բարելավող կենտրոնական հանձնաժողովի (ЦЕКУБУ) «Заячий ремиз» հանգստյան տանը: Լենինգրադում, սակայն, չեն բնավորվել, քանի որ դրան ինչ-ինչ պատճառներով դեմ է եղել Գրողների միութչյան քարտուղար Նիկոլայ Տիխոնովը: Այդ իսկ պատճառով դիմել են ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Վ. Մուրտոմիլին՝ աշխատանքի և բնակարանի հարցով, բայց անարդյունք. 1931-ի հունվարից 1932-ի հունվարը ապրել են տեղից տեղ փոխադրվելով:

1931 թ. Օ. Մանդելշտամի գրած առավել նշանակալից բանաստեղծություններից մեկի ստորև բերվող տողերը, կարծես թե, պատասխան են այն բոլոր քննադատներին, ովքեր տարիներ շարունակ բանաստեղծին պախարակել են «թանգարանային» կյանքով ապրելու և արդիականության հետ շփումների բացակայության համար.

Пора вам знать: я тоже современник,
Я человек эпохи Москошвея,
Смотрите, как на мне топорщится пиджак,
Как я ступать и говорить умею!
Попробуйте меня от века оторвать,
Ручаюсь вам – себе свернете шею!¹⁷.

1932–1933 թթ. Մանդելշտամները կրկին ապրել են Մոսկվայում Գերցենի տանը¹⁸: «Այնտեղ լիքն էին գրողական ամեն տեսակի տականքներն ու սադրիչները»¹⁹: Օ. Մանդելշտամը դեռևս «Չորրորդ արձակ»-ում, որը թելադրել է կնոջը 1929–1930 թվականների ձմռանը, գրում է. «Համաշխարհային գրականության բոլոր ստեղծագործությունները ես բաժանում եմ թույլտվությամբ և առանց թույլտվության գրվածների: Առաջինը՝ նողկանք է, երկրորդը՝

¹⁷ О. Лекманов. *Նշվ. աշխ.*, էջ 5:

¹⁸ Л. Видгоф. *Նշվ. աշխ.*, էջ 283–338: Այս էջերում հանգամանորեն ներկայացված են Մոսկվայում ապրելու այդ տարիների Օ. Մանդելշտամի կյանքն ու գործունեությունը:

¹⁹ Б. С. Кузин. Об О. Э. Мандельштаме. – «Вопросы истории естествознания и техники» (М.), 1987, № 3, с. 141.

առևանգված օդ: Ես ուզում եմ թքել նախապես թույլատրված գործեր գրողների դեմքին, ուզում եմ մահակով խփել դրանց գլխին և բոլորին Գերցենի Տանը սեղանի շուրջ նստեցնել՝ ամեն մեկի դեմը դնելով մի բաժակ ոստիկանական թեյ և յուրաքանչյուրի ձեռքը խոթելով Գորնֆելդի մեզի անալիզը:

Այս գրողներին ես կարգելիս ամուսնանալ ու երեխաներ ունենալ: Նրանք ո՞նց կարող են աշխարհ բերել երեխաներ (ի դեպ, Մանդելշտամներն էլ երեխա չեն ունեցել — Ա. Զ.): Չէ՞ որ զավակները պետք է մեզ շարունակեն, մեր կիսատ մնացած ամենագլխավոր խոսքն ասեն, այն դեպքում, երբ նրանց հայրերը առնվազն երեք պորտ ծախվել են չեչոտ չարիքին (նկատի ունի Ստալինին — Ա. Զ.)»²⁰:

... Այդ շրջանում բանաստեղծի նյութական վիճակը որոշ չափով բարելավվել է, կրկին Ն. Բուխարինի միջամտությամբ երկսենյականոց կոոպերատիվ բնակարան է գնել Մոսկվայի Նաչոկինյան նրբանցքում (այժմ Ֆուրմանովի փողոց):

1932 թ. նոյեմբերը Մանդելշտամն անցկացրել է ЦЕКУБУ-ի «Узкое» հանգստյան տանը: Նոյեմբերի 10-ին նա մեկ օրով մեկնել է Մոսկվա, որտեղ «Литературная газета»-ի խմբագրությունում տեղի է ունեցել Մանդելշտամի ստեղծագործությունների փակ երեկոն²¹: Այնուհետև երեկոները շարունակվել են. 1933 թ. փետրվարի 22-ին Լենինգրադի «Կապելլա»-ում, մարտի 2-ին «Մամուլի տանը», մարտի 14-ին Մոսկվայում «Պոլիտեխնիկական թանգարանում»²², ապրիլի 3-ին էլ Մոսկվայի նկարիչների ակումբում²³: Մանդելշտամն 1933 թ. գրել է «Զրույցներ Դանթեի մասին» գրաքննադատական էսսեն (լույս է տեսել 1967-ին), որտեղ շարադրված են նրա առավել ամբողջական հայացքները պոեզիայի մասին: Սեպտեմբերին Ա. Ախ-

²⁰ Օ. Մանդելշտամ. *Նշվ. գիրքը*, էջ 237:

²¹ Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 409; Л. Видгоф. *Նշվ. աշխ.*, էջ 325–326:

²² Այդ մասին մանրամասն տե՛ս Л. Видгоф. *Նշվ. աշխ.*, էջ 415–418:

²³ О. Лекманов. *Նշվ. աշխ.*, էջ 158–159:

մատովայի տանը նա էսսեն ներկայացրել է *Լենինգրադի բանասերներին ամբողջ վերնախավին*²⁴:

²⁴ Ճանաչողական արժեք ունի Լ. Գինզբուրգի «О старом и новом. Статьи и очерки» (Լենինգրադ, 1982) վերնագրով գրքի «Հին գրառումներից» բաժնի «Մանդելշտամ» հատվածը (էջ 413–414), որտեղ հեղինակն այդ երեկոյից ստացած տպավորության տակ ահա այսպիսի բնութագիր է տվել բանաստեղծին. «Մանդելշտամն Աննա Անդրեևնայի (Ախմատովայի – Ա. Զ.) մոտ կարդում էր «Զրույցներ Դանթեի մասին»-ը: Մանդելշտամը կարճահասակ է, նիհար, նեղ ճակատով, փոքրիկ կոր քթով, դեմքի ներքևի սուր մասն անխնամ, համարյա ճերմակահեր մորուքով, լարված հայացքով և կարծես ոչ մի մանրուք չնկատող: Նա խոսում է, ատամնազուրկ բերանը սեղմած, երգային ուղևորների անսպասելի նրբաձև ինտոնացիայով: Նա լեցուն է ռիթմերով, ինչպես նաև մտքերով ու հիանալի խոսքերով: Կարդալիս նա օրորվում է՝ շարժելով ձեռքերը. նա կորիֆեյի բնախոսությամբ հաճույքով շնչում է բառերի ռիթմով, որոնցից հետո հանդես է գալիս պարող երգչախումբը: Նա ծիծաղելիորեն է քայլում, չափից ավելի ուղիղ մեջքով, ասես բարձրանալով ոտքի մատների վրա:

Մանդելշտամը ցնորվածի անուն է հանել և, իրականում, ցնորված է թվում մարդկանց միջավայրում, ովքեր սովորություն ունեն թաքցնել կամ նենգափոխել իրենց իմպուլսները: Նրա համար, հավանաբար, իմպուլսի և արարքի միջև գոյություն չունի տարածություն, տարածություն, որը կազմում է եվրոպական կենսաձևի էությունը: Ա<ննա> «Անդրեևնան ասում է. «Օսիպը սյուրպրիզների արկղ է»: Հավանաբար, նա շատ տարբեր է: Եվ սկանդալների մեջ, հավանաբար, նա ավելի բնական է: Բայց բարեզարդ Մանդելշտամը, ինչպիսին նա հատկապես ձգտում է լինել Ա<ննա> Ա<խմատովայի> մոտ՝ անհեթեթ է: Նա չի տիրապետում մեր քաղաքակրթության պարզագույն դրսևորումներին: Նրա օձիքը և փողկապը՝ իրենք իրենց համար են: Ինչ վերաբերում է նրա շատ կարճ, բարակ, չափանակագույն գծավոր կտորից տաբատին, ապա այդպիսիք չեն լինում: Այդ գործվածքի գլանը կնոժը տվել են զգեստի համար:

Կենցաղային նրա վարվելակերպը զարմանալիորեն գործնական չէ: Նրա բարձների տարօրինակ քաղաքավարությունը, ձեռքսեղմումների անկարողությունը, որ ճանկում է ձեր մի բուռ մատները, ձայներանգի երգեցիկ քնքշությունը, երբ նա խնդրում է իրեն տալ լուցկին, այդ ամենն ինչ-որ

Սակայն արդեն իսկ ձևավորվում էր անհատի պաշտամունքը, և երկրի հասարակական-քաղաքական, գրական-մշակութային կյան-

դիմիկ և զվարճալի խեղդատակություն է: Նա կիրառում է առօրյա խոսեղած, փոքր-ինչ բռնական, փոքր-ինչ գոեհիկ: Օրինակ, ինչպես ասումունքելու ժամանակ, շուրջը նայելով նա հարցնում է. «Չափից ավելի արագ չե՞մ բլբլացնում»: Բայց հենց որ դիմում է կարևորություն ունեցող նյութի, ուժգին բացվում են վերամբարձ խոսքի մուտքերը: Նա թափահարում է ձեռքերը, նրա աչքերն արտահայտում են լիակատար կտրվածություն ավտոից և գրուցակցից, և թեյի պնակի մեջ եղած պանրահացի մնացորդներից: Նա խոսում է իր բանաստեղծությունների բառերով. կցկտուր, թլվատ, ... լպիրչ: Ամեն դեպքում չմոռանալով խորամանկել ու կատակել:

Մանդելշտամը լավատեսություն հաստատող երևույթ է: Մենք տեսնում ենք մարդու, որը ցանկանում է ունենալ փող ու փառք և վշտանում է, եթե իր բանաստեղծությունները չեն տպագրվում: Բայց մենք տեսնում ենք, թե այդ տխրությունն ինչքան աննշան է իր ստեղծագործական իրացման ապրումների համեմատ, երբ այն զուգակցվում է ստեղծագործական անսպառ զգացումին: Տեսնում ենք լավագույնը. իրականացվող արժեք և մարդ, ով փոխադրվել է իր գործի մեջ: Նա փոխադրվել է այնտեղ ամբողջովին, ինչով կարող էր, և մնացյալը՝ պարզվեց աստանան գիտի թե ինչ է. սկանդալներ, հասարակական դատեր: Մարդիկ գործին զոհաբերում էին իրենց կյանքը, առողջությունը, ազատությունը, կարիերան, ունեցվածքը: Մանդելշտամական խելությունը կենցաղային կերպարով մարդու զոհաբերություն է: Դա նշանակում է, որ կամային լարվածության ոչ մի մասնիկ բանաստեղծական աշխատանքից դուրս չի վատնվել: Բանաստեղծական աշխատանքը կարիք ունի բանաստեղծի ինքնահարկադրման. առանց չընդհատվող ինքնահարկադրման այն արագորեն կոպտանում ու արժեզրկվում է: Ամենը գնաց այնտեղ, և կենցաղում մնաց տարօրինակ մարդը՝ չկանոնավորված ցանկություններով, «խենթ»:

Նա լեցուն է ռիթմերով, մտքերով և առաջ մղող խոսքերով: Իր գործը նա անում է հրեթաց, ... և անտարբեր շրջապատի հանդեպ ... »:

Ի դեպ, վերագրյալի առումով այլոց շարքում համանման ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև Ռ. Իվնևը՝ Օ. Մանդելշտամի մասին գրած իր հուշերում. տե՛ս Р. Ивнев. Образ, временем сожженный. Стихотворения: 1904–1981. М., 1991, с. 143–155.

քը դառնում էր հեղձուցիչ: Դեռևս 1930 թ. դեկտեմբերին Մանդելշտամը գրել էր «Լենինգրադ» վերնագրով բանաստեղծությունը, որի տողերը՝ «Պետերբուրգ իմ, ես դեռևս մեռնել չեմ կամենում» ու «Եվ ողջ գիշերը սպասում եմ թանկ հյուրերին միայն», դրա խոստեն վկայությունն են: Իսկ 1931 թ. նա Ստալինի մասին է. Գերշտեյնի բժիշկ հորն ասել է. «... պարագիտի տիպ է ... տասնապետ, որը ստիպում է հրեաներին աշխատել Եգիպտոսում»²⁵: Այդ ամենին գումարվում է «Правда» թերթում նրա «Ճանապարհորդություն Հայաստան» երկի դեմ գրված «Ջախջախիչ» հոդվածը (այդ մասին մանրամասն խոսք կլինի ստորև):

1933 թ. նոյեմբերին Օ. Մանդելշտամը գրել է «կրեմլյան սարեցուն»՝ Ստալինին վերաբերող «ճակատագրական» բանաստեղծություններ, որոնցում մերկացնում է ստալինիզմը: Բանաստեղծությունները լայնորեն տարածում է՝ դրանք կարդալով գրական ու մերձգրական միջավայրում՝ ունկնդիրների վրա թողնելով սարսափազդու տպավորություն: Այսպես, օրինակ, լսելով դրանք՝ ճանաչված գրաքննադատ Գ. Շենգելին ասել է. «Մենք այստեղ ոչինչ չենք կարդացել, ես ոչինչ չեմ լսել»²⁶:

1934 թ. փետրվարի 17-ին Վ. Բոնչ-Բրուեկչը Օ. Մանդելշտամին առաջարկում է վաճառել իր արխիվը Գեղարվեստական գրականության, քննադատության և հրապարակախոսության կենտրոնական թանգարանին: Մարտի 16-ին թանգարանի ֆոնդերը համալրելու համար կազմված փորձագիտական հանձնախումբը բանաստեղծին արխիվի համար առաջարկում է «ծիծաղելիորեն» ցածր գին՝ 500 ռուբլի: Օ. Մանդելշտամը ցասումնալից նամակ է գրում Վ. Բոնչ-Բրուեկչին և հրաժարվում արխիվի վաճառքից՝²⁷:

²⁵ Э. Герштейн. Новое о Мандельштаме. – «Наше наследие», вып. V. М., 1989, с. 108. Հավելենք. Գերշտեյնը ուշագրավ հուշեր ունի Մանդելշտամի մասին. տե՛ս նույն տեղում, էջ 101–124:

²⁶ С. И. Липкин. Угль, пылающий огнем. М., 1997, с. 398; Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 331:

²⁷ О. Лекманов. Նշվ. աշխ., էջ 173:

1934 թ. ապրիլի կեսերին Օ. Մանդելշտամը Լենինգրադում էր: Մայիսի սկզբին «Գրողների հրատարակչություն»-ում հանդիպում է Ալեքսեյ Տոլստոյին, ով նախագահել էր «Սարգիջան–Մանդելշտամ» հայտնի դատը, և մարդկանց ներկայությունից ապտակում է նրան²⁸:

Նաև դրա հետևանքներից էր, որ 1934 թ. մայիսի 13-ի լույս 14-ի գիշերը բանաստեղծը ձերբակալվել է Նաչոկինյան նրբանցքի իր բնակարանում: «Ձերբակալման հրամանագիրը ստորագրել էր անձամբ Յագոդան,— հիշում է Ախմատովան:— Խուզարկությունը շարունակվեց ամբողջ գիշեր: Բանաստեղծությունն էին փնտրում, քայլում էին սնդուկներից դուրս նետած ձեռագրերի վրայով: Մենք բոլորս նստած էինք մի սենյակում: Շատ լուռ էր: ... Քննիչն իմ ներկայությամբ գտավ «Գայլը» և ցույց տվեց Օսիպ էմիլեիչին: Նա լուռ գլխով արեց: Հրաժեշտ տալիս համբուրեց ինձ: Նրան տարան առավոտվա 7-ին»²⁹: «Վարժվել ենք ապրել և՛ մեր տակ երկիր չզգալ ...» բանաստեղծությունը նրա «գործի» մեջ եղել է հիմնական մեղադրական նյութը: Չափազանց սուր, դիպուկ բնորոշումներով այդ բանաստեղծությունը բերենք ամբողջությամբ.

Վարժվել ենք ապրել և՛ մեր տակ երկիր չզգալ,
 Խոսքը մեր չի լսվում՝ չկտրած տասը քայլ,
 Իսկ եթե խոսք բացես կես-պռատ զրույցում,
 Քո աչքը կխոթեն կրեմլյան սարեցուն:
 Հաստիկ են մատները՝ որդի պես լարծուն,
 Ճշմարտա-փիթանոց բառեր է արտածում,
 Ուտիճի աչքերն են սուր ծիծղուն
 Եվ նրա ճիտքերն են պսպղում:

Շուրջը բարակավիզ դեկավարք են վխտում —
 Խաղալիք-մարդուկներ առաջնորդ իր ձեռքում

²⁸ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 173–174, 218, Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 323–325:

²⁹ Ս. Ա. վ եր ի ն ց և. Նշվ. հոդվ., էջ 38–39:

Ծվծվում, մլավում, թնկթնկում են, –
 Նա է սոսկ, որ բամփում ու բոթում է,
 Պայտի պես չպպացնում հրամանք օրենքի
 Ամորձուղ ու աչքիդ, ճակատիդ ու հոնքիդ:
 Մորու Հափ ախորժ են մահերն հատիկ-հատիկ,
 Եվ լայնարձակ կուրծք ունի օսեթի³⁰:

Օ. Մանդելշտամը դատապարտվել է երեք տարով՝ ազատ բնակության աքսոր ուղարկվել նախ Սվերդլովսկի մարզի Ջերդին քաղաքը, ապա Վորոնեժ: Դատավճիռը մեղմ էր, անգամ թույլատրեցին, որ կինը նրան ուղեկցի: Հոգեբանական ծանր վիճակում գտնվող Մանդելշտամը Ջերդինում իրեն լուսամուտից դուրս է նետել: Ի դեպ, Ն. Բուխարինը *ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահ Վ. Մոլոտովի միջոցով* կազմակերպել է, որ 41-ամյա Մանդելշտամը թոշակ ստանա. 1932 թ. մարտի 23-ին նշանակվել է անհատական ցմահ կենսաթոշակ՝ 200 ռ.³¹, որից գրկվել է աքսորի առաջին իսկ ձմռանը: «Մինչ այժմ հանելուկ է մնում, այդ ժամանակ ինչը փրկեց Մանդելշտամի կյանքը: Արդյոք օգնեց Ն. Ի. Բուխարինի³² և Բ. Լ. Պաստեռնակի հովանավորությունը³³, թե՞ դեր է խաղացել առաջնորդի գաղտնի

³⁰ Օ. Մանդելշտամ. *Նշվ. գիրքը*, էջ 163: Բանաստեղծության մասին տե՛ս նույն տեղում, էջ 361–362:

³¹ «Այն (կենսաթոշակը – Ա. Զ.) տրվել էր «ռուս գրականության մեջ ունեցած վաստակի համար»՝ սովետական գրականության մեջ տվյալ գրողին «օգտագործելու անհնարությունից պատճառով»: Այդ ձևակերպումը, – ըստ Ն. Մանդելշտամի, – ինչ-որ առումով համապատասխանել է իրականությանը, և մենք կռահեցինք, որ այն պատկանում է Ն. Բուխարինին» (Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 110, 405):

³² Տե՛ս Ն. Բուխարինի նամակը Ստալինին և վերջինիս մակագրությունը. «Մի վ ի նրանց իրավունք տվել ձեռքակալել Մանդելշտամին: Այլանդակություն է ... ».— П. М. Нерлер. Слово и «дело» Осипа Мандельштама. Книга доносов, допросов и обвинительных заключений. При участии Д. И. Зубарева и И. Л. Поболя. М., 2010, с. 39.

³³ Այդ մասին մանրամասն տե՛ս Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 135–139.

հույսն այն բանի համար, որ վարպետը կգովերգի իր անունը: Դժվար է ասել: Այնուամենայնիվ եղավ հրաման. «Մեկուսացնել, բայց պահպանել»: Պահպանել: ... Գիշերային հալումաշ անող հարցաքննություններից հետո աքսորել Ջերդին՝ սպասելով մահվան դատավճռի: Փրկարար հույսը ծնվեց Վորոնեժ աքսորելու մասին հանկարծակի հրամանի գալով, – նկատել է գրաքննադատ Ն. Ի. Վելիկայան: – Շնորհագրկված բանաստեղծը դիմացավ: Եվ գլխավորն այն է, որ նա հոգեպես չկոտրվեց: Վորոնեժյան շրջանը (1934–1937) նշանավորվեց ստեղծագործական վերելքով, Օսիպ էմիլիչը այստեղ ստեղծում է բանաստեղծությունների երեք «վորոնեժյան տետրերը»: Կյանքի, հողի, մարդու, ստեղծագործության նկատմամբ բանաստեղծի սերը պարզվեց, որ անհազ է: «Դու դեռ չես մեռել, դու դեռ մենակ չես ... Դու վայելում ես դաշտավայրերի վեհությունը // Եվ մշուշով, և սառնամանիքով, և բուք ու բորանով»: «Մեծ կարիքի, ծայրահեղ աղքատության մեջ» բանաստեղծը հանգիստ է և մխիթարվում է նրանով, որ իր քաղցրախոս աշխատանքը՝ անմեղ է, անբասիր:

Աննա Ախմատովան զարմանքով գրել է. «Ապշեցուցիչ է, որ Մանդելշտամի բանաստեղծություններում ազատությունը, լայնարձակությունը, խոր շնչառությունը երևան եկան հենց Վորոնեժում, երբ նա ամենևին ազատ չէր»³⁴:

³⁴ О. Манделштам. Личность. Творчество. Эпоха. Автор предисл. д. ф. н., проф. Н. И. Великая. Владивосток, 1989, с. 8. Մ. Ավերինցևը գրում է. «Հաճախ հարցնում են. էդ ո՞նց եղավ (սուքը՝ «Մեկուսացնել, բայց պահպանել» հրահանգի մասին է – Ա. Զ.), բացատրություն են փնտրում: Այո, հոգածողներ կային. Ախմատովան գնաց Ենուկիձեի մոտ, Պաստեռնակը՝ Դեմյան Բեդնու, Նադեժդա Յակովլևնան՝ Բուխարինի: Այո, Ստալինի տխրահույս զանգը (հունիսի 13-ին – Ա. Զ.) Պաստեռնակին՝ նույնպես եղել է: Սակայն այդ ամենը մի՞թե որևէ նշանակություն ունեն: Ե՛վ Ն. Ա. Ստրուվին, և՛ Բ. Մ. Սատնովը կարծում են, թե Ստալինն ուզում էր Մանդելշտամին «ձեռնասուն դարձնել», որպեսզի իրեն ծառայի» (Մ. Ա. վ ե ռ ի ն ց և. ն չ վ. հ ո գ վ., էջ 39): Վորոնեժյան վերջին շրջանի բանաստեղծությունների մասին հակիրճ

Վորոնեժում ապրած տարիներին Մանդելշտամին թույլ են տալիս կնոջ հետ պատրաստել Գյոթեի պատանեկության մասին գրական ռադիոհաղորդումներ (որով հիմք է դրվել Գյոթեի ինքնակենսագրական վեպի ստեղծմանը), երեխաների համար Գուլիվերի մասին հաղորդումներ տալ, Սովետական գրողների միության տեղական բաժանմունքի հանձնարարականով աշխատել է թատրոնում որպես գրական մասի վարիչ, թղթակցել մամուլին, մեկնել գործողումների մոտակա շրջաններ: Բանաստեղծն ընդունել է հյուրեր՝ Ա. Ախմատովային, է. Գերշտեյնին, Ն. Շտեմպելին և ուրիշների:

Այստեղ Օ. Մանդելշտամը սկզբնական շրջանում լիաթոք ստեղծագործել է, կրկին վերհիշել է Հայաստանը, գրել է կոչկակարություն անող աքսորյալ հայերի մասին բանաստեղծություններ, որոնք, ցավոք, կորել են: Վորոնեժի գրողների միության կուսխմբի քարտուղար Ստ. Ստոիչևի վկայությոնից հայտնի է, որ 1935 թ. փետրվարին Վորոնեժի «Коммуна» թերթի խմբագրությունում կայացել է գրողների ժողովը: Զեկուցում է լսվել ակմերիզմի մասին՝ նպատակ ունենալով պարզել Մանդելշտամի վերաբերմունքն իր անցյալի նկատմամբ: Պարզվել է՝ իր ելույթով բանաստեղծը ցույց է տվել, որ «ոչինչ չի սովորել, որ ինչպիսին եղել է, այդպիսին էլ մնացել է»³⁵:

1936-ին Օ. Մանդելշտամի դեմ նոր հալածանքներ սկսվեցին: «Աշխատավարձերը կտրեցին, — կարդում ենք Ն. Մանդելշտամի հուշերում: — Ծանոթները փողոցում գլուխները շուռ էին տալիս կամ նայում էին առանց ճանաչելու»: 1937 թվին «Литературный Воронеж» ամսանախը բանաստեղծին տրոցկիստների «բանդայի» շարքը դասեց, որ չուրջբոլորը տարածում է «մարազմի և ապաքաղաքականացման ոգի»: 1937 թ. ապրիլի 17-ին Մանդելշտամը գանգատվում է Կ. Ի. Չուկովսկուն. «Ես հայտնվել եմ շան, անտեր շան վիճակում ... Ես չկամ: Ես ստվեր եմ: Ես միայն իրավունք ունեմ

տե՛ս Ս. Ավերինցև. Նշվ. հոդվ., էջ 41–43, նաև՝ М. Л. Гаспаров. О. Мандельштам: гражданская лирика 1937 года. М., 1996.

³⁵ Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 412, 416; О. Лекманов. Նշվ. աշխ., էջ 185:

ողորմածուլթյանը՝ Սամատիխայի հանգստյան տան ուղեգիր է ստանում»³⁸։ Թվում է գործերը կարգավորվել են, կարելի է հանգիստ ստեղծագործել, և մարտ ամսին Մանդելշտամը ոգևորիչ նամակներ է գրում մտերիմ ընկերոջը՝ Բ. Կուզինին ու հորը։ Դա, սակայն, միայն թվում էր. ԽՍՀՄ գրողների միության առաջին քարտուղար Վ. Ստավսկու հայտնի նամակ-մատնագիրն ու դրան կցված Պ. Պավլենկոյի բացասական կարծիքն Օ. Մանդելշտամի մասին՝ ուղղված ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ Ն. Եժովին³⁹, կատարում են իրենց սև գործը։

1938 թ. մայիսի 1-ի լույս 2-ին, երբ Մանդելշտամները մարտի 8-ից հանգստանում էին առողջարանում, բանաստեղծը հակահեղափոխական գործունեության համար ձերբակալվել է երկրորդ անգամ։ «... իսկ «ինչո՞ւ», ..., բանաստեղծին երկրորդ անգամ ձերբակալեցին՝ նախորդից չորս տարի անց։ Նա նոր հանդգնություններ չէր գործել, — ծանր պահերին փորձում էր Ստալինին փառերգել (Մանդելշտամին չփրկեց անգամ 1937 թ. հունվարի 20-ին Վորոնեժում գրած Ստալինին նվիրված ներբողը — Ա. Զ.)։ Ուրեմն՝ «ինչո՞ւ», — հարց է տալիս Ս. Ավերինցևը ու դա ահա այսպես մեկնաբանում. — Թվում է ... հարցի պատասխանն էլ բարդ չէ։ Եթե Ստալինը որևէ բանի տիրապետում էր կատարելապես՝ դա վրիժառությունն էր և վրեժն առնելու հարմար պահին սպասելու կարողությունը։ Բանաստեղծի ճակատագիրը, որն իրեն թույլ էր տվել անասելի գործության բացահայտ հարված հասցնել ժողովուրդների Առաջնորդի անձին, սկզբունքորեն վճռված էր, ամենայն հավանականությամբ՝ մեկեն ու անվերադարձ. նա հողի վրա չափտի քայլեր։ Նրանից փառերգություններ չէին պահանջվում. պահանջվում էր միայն մահ։ Բայց գլխի ընկնելը դժվար չէ, որ անհապաղ գնդակահարությունը կամ նույնիսկ նշանակալի ճամբարային ժամկետը հետաքրքրություն կհարուցեր «Հանցավոր» բանաստեղծության հանդեպ, որն, անշուշտ, արձագանք կունենար։ Ոչ, առաջին պատիժը պետք է եփած հավի ծիծաղը բերելու չափ դատարկ մի բան լիներ. մեծահասակ երեխային չարություն անելու համար անկյուն են կանգնեցրել։ Բայց խայծը նետված է, և նրա

³⁸ Ս. Ավերինցև և. նշվ. հոդվ., էջ 43:

³⁹ Մանրամասն տե՛ս Օ. Лекманов. Նշվ. աշխ., էջ 209–211, Л. Видгоф. Նշվ. աշխ., էջ 577–578:

մասին չեն մոռանա: Իսկ երբ վրա հասնի վաղուց ծրագրված տեղորի ալիքը, և ամեն մեկն իր հոգսերով տապակվի, բանաստեղծն աննկատելիորեն կչքանա աշխարհի երեսից»⁴⁰:

Մանդելշտամը դատապարտվել է հինգ տարվա ազատազրկման, աքսորվել Վլադիվոստոկ տարանցիկ ճամբար: Այստեղից ստացվել է Մանդելշտամի հաղորդած վերջին լուրը. «Առողջությունս շատ թույլ է: Ծայրահեղ հյուծված եմ, նիհարել եմ, համարյա անճանաչելի եմ, բայց իրեր, սնունդ ու փող ուղարկելը — չգիտեմ, իմաստ ունի՞: Փորձեք, այնուամենայնիվ: Առանց իրերի շատ եմ մրսում»⁴¹:

Նաղենկա, հարազատս, չգիտեմ ո՞ղջ ես արդյոք, աղավնյակս»⁴¹:

Այս ճամբարում էլ Մանդելշտամը 1938 թ. դեկտեմբերի 27-ին կնքել է մահկանացուն:

... Գերցենի տանն ապրելիս Օ. Մանդելշտամի հարևաններից էր գրող, «շատ լավ ու տաղանդավոր մարդ»՝ Ս. Կլիչկովը: Օրերից մի օր՝ բանավեճի ժամանակ, նա Մանդելշտամին ասել է. «Այնուամենայնիվ, Օսիպ Էմիլիչ, ձեր խելքը հրեական է»: Դրան անմիջապես Մանդելշտամը հակադարձել է. «—Դե ինչ, հնարավոր է: Բայց պոեզիա ուսական է»: «Դա ճշմարիտ է: Այ, դա ճշմարիտ է», — ամենայն անկեղծությամբ խոստովանել է Կլիչկովը»⁴²: Եվ, իրապես, Մանդելշտամի ողջ ստեղծագործությունը գրված է ուսական պոեզիայի ոգով: 1937 թ. հունվարի 21-ին վորոնեժյան աքսորավայրից գրող և գրականագետ Յու. Տինյանովին գրած նամակում բանաստեղծը խորապես համոզված այդ մասին գրում է. «Արդեն քառորդ դար է, ինչ ես, կարևոր ու դատարկ բաները միախառնելով,

⁴⁰ Ս. Ավերիենց և. Նշվ. հոդվ., էջ 39–40:

⁴¹ Նույն տեղում, էջ 44:

⁴² Б. С. Кузин. Նշվ. հրապ., էջ 142–143: Վերը նշված երկխոսության առնչությամբ ուշագրավ է անվանի գրաքննադատ, հրապարակախոս, թարգմանիչ ու բանաստեղծ Գ. Կուբատյանի հավելում-զուգահեռը՝ Ս. Դովլաթովի և Վ. Սարոյանի գործունեության հետ կապված (տե՛ս Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки. Ереван, 2005, с. 286–287): Ի դեպ, Օ. Մանդելշտամը շատ է հավանել Ս. Կլիչկովի հետևյալ խոստուն տողերը. «Впереди одна тревога, // И тревога позади. // Посиди со мной немного, // Ради Бога, посиди ...» (Н. Мандельштам. Воспоминания, с. 191).

լող եմ տալիս դեպի ուռա պոեզիան, բայց շուտով իմ բանաստեղծությունները կմիահյուսվեն նրան՝ ինչ-որ բան փոփոխելով նրա կառուցվածքի ու բաղադրություն մեջ»⁴³:

Հավելենք, որ մինչև 1960-ական թվականների սկիզբը Օ. Մանդելշտամի անունն ու ստեղծագործական ժառանգությունն ընթերցող լայն հանրությանն անծանոթ է եղել: Չի եղել մի անկյուն (էջ ենք խոսում տուն-թանգարանի մասին), որտեղ հավաքված լինեին բանաստեղծի՝ հրաշքով փրկված ձեռագրերն ու կենցաղային իրերը: Միայն 2021 թ. սկզբին է Մոսկվայում բացվել մշտական էքսպոզիցիա՝ «Մանդելշտամի փողոց. Օսիպ և Նադեժդա»⁴⁴:

⁴³ Ս. Ավերինցև. նշվ. հոդվ., էջ 5:

⁴⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս М. Яковлева. Комната для поэта. В Москве открылась постоянная экспозиция «Улица Мандельштама: Осип и Надежда». – «Литературная газета», № 11, 17–23 марта 2021, с. 1; 29. Ի դեպ, Օ. Մանդելշտամի կյանքի ու գործունեության վերաբերյալ կան հակասական և մտորումների տեղիք տվող բազում տեղեկություններ: Դրանցից վերջինը տպագրվել է «Литературная газета»-ում (№ 19, 12–18 մայիս 2021, էջ 17): «Բանաստեղծը և իշխանությունը: Մի քանի քիչ հայտնի դրվագներ Օսիպ Մանդելշտամի կյանքից» վերնագրով նյութի նախաբանում կարդում ենք. «Մեր օրերում բանաստեղծների կենսագրությունները հաճախ մեկնաբանվում են հակապետական կտրվածքով: Օրինակ, միանշանակ ընդունված է Մանդելշտամին ներկայացնել բացառապես իշխող ուժերի հակառակորդ և զոհ: Գրողների միություն Սանկ Պետերբուրգի բաժանմունքի քննադատություն և գրականագիտություն մասնաճյուղերի անդամները հավաքվել էին գրողների տանը մտքեր փոխանակելու քսաներորդ դարի դժոխակ տարիներին բանաստեղծի և իշխանության իրական փոխհարաբերությունների մասին: Իր տեսակետը ներկայացրեց նիստի մասնակից պետերբուրգյան հայտնի նկարիչ և գրող Նվգենի Անտիպովը»: «Ունկնդիրների ցուցակ», «Անհատական թոշակ», «Բանկետ Բյուսկինի հետ» և «Լողանք «Անգլետեր»-ում խորագրերի ներքո հետաքրքիր, բայց մասամբ հայտնի մանրամասներ են ներկայացված Օ. Մանդելշտամի կյանքից:

Օ. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՎ ԲԱՔՎՈՒՄ

1920 թ. սկզբին՝ «Նախագգալով գալիքի պատժամահերը, խռովահույզ իրադարձությունների աղմուկից // ես ներերդների մոտ Սև ծով փախա ... »: Ուղեհույներ՝ Խարկով և Կիև, որտեղ նա (Օ. Մանդելշտամը – Ա. Զ.) հանդիպեց իր կյանքի ապագա ուղեկցին՝ Ն. Յա. Խազինային, Կոկտեբել, որտեղ նա չկարողացավ հաշտ ապրել Վոլոչինի հետ, և Թեոդոսիա, որտեղ ձերբակալվեց վրանգեյլյան հակահետախուզության կողմից և ազատվեց գնդապետ Յիբուկսկու, ինչպես նաև Վոլոչինի ու Վերեսաևի ջանքերով, – Բաթումի, որտեղ մեկ անգամ ևս ձերբակալվեց մենչևիկյան կառավարության ծովափնյա պահնորդների կողմից և ազատ արձակվեց բանաստեղծներ Ն. Միցիշվիլիի ու Տ. Տաբիձեի միջնորդությամբ, և վերջապես՝ Թբիլիսի»⁴⁵, – արձանագրել է Ս. Ավերինցեր:

Ռուս նշանավոր գրող և հրապարակախոս Իլյա Էրենբուրգը 1920 թ. սեպտեմբերի վերջերին, Թեոդոսիայից Մոսկվա հասնելու փոխարեն, փորձությունների բերումով կնոջ հետ հայտնվում է Թիֆլիսում: Անձանոթ քաղաքում առաջին օրն իսկ հանդիպում է Օսիպ Մանդելշտամին: Վերջինիս, վրաց բանաստեղծներ Տիցիան Տաբիձեի և Պաուլ Յաշվիլու հետ անցկացրած օրերի մասին Էրենբուրգը հիշարժան էջեր է թողել իր ինքնակենսագրական-հուշագրական «Մարդիկ, տարիներ, կյանք» գրքում: Պատմելով, որ Գոլովինսկի պողոտայում անսպասելի հանդիպումը մեծ ուրախություն է պատճառել և՛ իրեն, և՛ Մանդելշտամին, ով, ինչպես նկատում է Ի. Էրենբուրգը, ընդամենը մի երկու օր լինելով Թիֆլիսում՝ «... ոտքերի տակ հող ունեւր ... գործարար ասաց. «Հիմա մենք կգնանք Տիցիան Տաբիձեի մոտ, և նա մեզ կտանի հիանալի պանդոկ ...»⁴⁶: Այնուհետև Մանդելշտամը պատմում է Բաթում քաղաքում իր գլխով անցածը, բանտում հայտնվելը, վրաց բանաստեղծների՝ նրան

⁴⁵ Ս. Ավերինցև և. նշվ. հոդվ., էջ 26:

⁴⁶ И. Эренбург. Люди, годы, жизнь, кн. 1 и 2. М., 1961, с. 508. Ի դեպ, 2021 թ. լրացել է նաև Ի. Էրենբուրգի ծննդյան 130-ամյակը, և գրքի այս մի քանի էջի նյութը հարգանքի տուրք է հայ ժողովրդի ազնիվ բարեկամի հիշատակին:

ազատելը: Տ. Տաբիձեն խանդավառ դիմավորում է նրանց, ապա գտնելով Պ. Յաշվիլուն՝ հյուրասիրում են բանաստեղծ հյուրերին, տեղավորում հյուրանոցում: Հաջորդ օրը Մանդելշտամի հետ գնում են սովետական դեսպանատուն և խնդրում իրենց ուղարկել Ռուսաստան. խոստանում են ուղարկել մեկ-երկու շաբաթից: «Մենք Թբիլիսիում ապրեցինք երկու շաբաթ. այդ օրերն ինձ թվացին քնարական նահանջի օրեր ..., – վերհիշում է էրենբուրգը: – Մինչ այդ ես երբեք չէի եղել Արևելքում, և հին Թբիլիսին ինձ թվաց «Հազար ու մեկ գիշերների» քաղաքներից: Մենք չըջում էինք անծայր Մեյդանով ... եղանք ծծմբային բաղնիքներում ... Վերայի այգիներում գինի էինք խմում ... Հին տաճարներում դիտում էինք քարե թագուհիներին, որոնց շուրջ էին հովազները: ...»: «Ինձ նվիրեցին «Թիֆլիսի բանաստեղծների համաքարուլթյան ժողովածուն» («Ակմե» խորագրով – Ա. Զ.), – գրում է էրենբուրգը: – Այդ գրքուկը պատահաբար ինձ մոտ պահպանվել է: Հեղինակների թվում չատ են պոետական ազգանուններով բանաստեղծուհիները. Նինա Գրաչիանսկայա, Բել-Կոն-Լյուբոմիրսկայա, Մազդալինա դե-Կապրելևիչ: «Թիֆլիսի համաքարուլթյան» բանաստեղծները գրում են սոնետներ Սվարոգի, Էրոսի, Սուլամիթի, Սանավալլատի, Մոնֆորի և նրանց նույնքան մոտ մյուս գործող անձանց մասին»⁴⁷: Զի բացառվում, որ Օ. Մանդելշտամին նույնպես նվիրել են այդ գրքուկից⁴⁸:

⁴⁷ Նույն տեղում, էջ 511–513: Նկատենք, որ Պետերբուրգի «Цех поэтов» գրական միավորման օրինակով Ս. Գորոդեցկին [1916–1921 թթ. ապրել ու գործել է Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում. տե՛ս Ա. Զաքարյան. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010, ն ու յ ն ի՝ Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916–1921 гг.). Ереван. 2015] 1918 թ. Թիֆլիսում հիմնել էր նույն անունով համաքարուլթյուն (այդ մասին մանրամասն տե՛ս А. Закарян. Деятельность тифлисского «Цеха поэтов».– «Историко-филологический журнал» НАН РА, 2011, № 2, с. 113–130; ն ու յ ն ի՝ Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акмэ». Ереван, 2011):

⁴⁸ Վ. Գոլովինը գրում է, որ Օ. Մանդելշտամը մասնակցել է «Цех поэтов»-ի երեկոների (տե՛ս В. Головин. Նշվ. աշխ., էջ 19): Դա բացառվում է, քանզի Թիֆլիսյան «Цех»-ը դեռևս 1919 թ. սկզբներին դադարեցրել էր իր գործունեությունը. նույն թվականի օգոստոսից

«... 1920 թ. աշնանը ... վրացի ընկերները մեզ ապաստան տվեցին, ջերմացրին: ... Յաշվիլին ու Տաբիձեն Ռազմավիրական ճանապարհով մեզ ճանապարհեցին մինչև առաջին կայանը ...»⁴⁹, — Թիֆլիսյան օրերի վերաբերյալ ասելիքն ամփոփում է Հրենբուրգը՝ առանց մտաբերելու իր և Մանդելշտամի պատվին կազմակերպված գրական երեկոն, սեփական ուշագրավ հոգվածները մամուլում:

Երեկոն պետք է տեղի ունենար սեպտեմբերի 26-ին կոնսերվատորիայի դահլիճում: «Արդի ուղևորական պոեզիան» խոսքով միջոցառումը բացելու էր բազմակողմանի խմացություններով և հոետորական փայլուն ձիրքով հուշակված վրաց անվանի գրական գործիչ Գ. Ռաբակիձեն: «Արվեստը և նոր դարաշրջանը» բանախոսությունը և «Կրակ», «Նոր արշալույսներ» գրքերից բանաստեղծությունների ընթերցանությամբ հանդես էր գալու Ի. Հրենբուրգը, «Քար» գրքից բանաստեղծություններ էր կարդալու Օ. Մանդելշտամը: Վերջիններիս բանաստեղծությունների ընթերցանությամբ հանդես էր գալու ուղևորական Ն. Ն. Խոդոտովը⁵⁰, որը զգալի ժամանակով ապաստ

համանուն գրական միավորում էր գործում Բաքվում (տե՛ս Ա. Զաքարյան. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, էջ 179):

⁴⁹ И. Эренбург. Զգ. աշխ., էջ 516–517:

⁵⁰ «Բանաստեղծներ Օ. Մանդելշտամի և Ի. Հրենբուրգի ժամանումը: Ղրիմից Թիֆլիս են եկել բանաստեղծներ Օ. Մանդելշտամը և Ի. Հրենբուրգը: Կիրակի օրը կոնսերվատորիայում կայանալու է նրանց միակ երեկոն: Ծրագիրը. 1) Գր. Ռաբակիձե — Խոսք ժամանակակից ուղևորական պոեզիայի մասին, 2) Ի. Հրենբուրգ — զեկուցում՝ «Արվեստը և նոր դարաշրջանը» և բանաստեղծություններ «Կրակ» ու «Նոր արշալույսներ» գրքերից, 3) Օ. Մանդելշտամ — բանաստեղծություններ «Քար» գրքից և նոր բանաստեղծություններ, 4) Ն. Ն. Խոդոտով — Օ. Մանդելշտամի և Ի. Հրենբուրգի բանաստեղծությունները: Երեկոն գրական մեծ հետաքրքրություն է ներկայացնում» [«Слово» (Тифлис), 24. IX. 1920]: Ի դեպ, «Слово» թերթի սեպտեմբերի 26-ի հայտարարության մեջ Ի. Հրենբուրգի «Նոր արշալույսներ» գրքի վերնագիրը տպագրվել է՝ «Երկու Արշալույսներ»:

տան էր գտել թիֆլիսում և, ըստ էրենբուրգի, այդ օրերին «Հավաքվում էր դեպի տուն՝ Պետրոգրադ»⁵¹:

Գրական այդ երեկոյի վերաբերյալ, սակայն, արձագանքներ չհաջողվեց գտնել⁵², դրա փոխարեն որոնումների շնորհիվ հայտնաբերվեցին Ի. էրենբուրգի ելույթները մամուլում, որոնք, անկասկած, ներկայացնում են գրապատմական հետաքրքրություն⁵³:

Հոկտեմբերի վերջին Ի. էրենբուրգի հետ Օ. Մանդելշտամը թիֆլիսից⁵⁴ մեկնել է Մոսկվա, ապա՝ Պետրոգրադ:

Ցավոք, մեզ չհաջողվեց տեղեկատվություն գտնել թիֆլիսահայերի հետ Մանդելշտամի առնչությունների մասին: Իսկ որ դրանք եղել են, կասկածից վեր է. այդ ժամանակ Վրաստանի մայրաքաղաքում ապրում էր հոծ հայություն, գործում էին հայ մտավորականությունը միավորող մի շարք միություններ, ակումբներ: Սակայն չմոռանանք, որ հենց այդ օրերին ընթանում էր հայ-թուրքական պատերազմը, ժողովրդի ողջ ուշադրությունը բևեռված էր դրա վրա, հոգսերով ծանրաբեռնված հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանն էլ գտնվում էր Լոռիում:

... թիֆլիսում անցկացրած օրերն այնքան տպավորիչ են եղել, որ Մանդելշտամը կնոջ հետ կրկին «հայտնվել» է թիֆլիսում: «Քսանմեկ թվականին Մանդելշտամի հետ Յենտրոնցվակի գնացքով գնում էինք թիֆլիս ... Դեպի թիֆլիս էր գնում տաքացվող ապրանքա-գնացքը՝ լեփլեցուն աշխատավորներով, ուլքեր պետք է առաջիկա-

⁵¹ Ст'я И. Эренбург. Նշվ. աշխ., էջ 512:

⁵² Սովորաբար տեղի ունեցած միջոցառումների վերաբերյալ «СЛО-ВО» թերթի հաջորդ համարում զետեղված է լինում տեղեկատվություն: Այս թերթի հաջորդ համարը լույս է տեսել սեպտեմբերի 28-ին: Հայաստանի ազգային գրադարանում պահվող «СЛОВО»-ի միակ հավաքածուի այդ համարի 2-րդ և 3-րդ էջերը, ցավոք, տպագրական խոտան են՝ սպիտակ էջեր, որտեղ էլ, ըստ ամենայնի, այդ երեկոյի մասին պետք է լինեք համապատասխան տեղեկատվություն:

⁵³ Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Զաքարյան. Իլյա էրենբուրգի թիֆլիսյան օրերը, Երևան, 2012 (հայերեն և ռուսերեն):

⁵⁴ Թիֆլիսում Օ. Մանդելշտամի անցկացրած օրերի մասին տե՛ս В. Головин. Նշվ. աշխ., էջ 14–20:

յում Թուրքիայից եկած հայ գաղթականներին բնակեցնելին և աշխատանքի տեղավորելին: Տաքացվող ապրանքագնացքով գնում էին սովորական աշխատաջան մարդիկ: Նրանց, հուսով եմ, հաջողվեց ինչ-որ բան անել ողբերգական հայերի բազմության համար, — վերհիշում է Ն. Մանդելշտամը: — Մի շաբաթ մենք, չգիտես ինչու, կանգնած մնացինք Կիսլովոդսկում... Խնդաղ կյանքը հանկարծակի ընդհատվեց Բաքվում. գնացքում մի քանի մարդ հիվանդացան խուլերայով: Մեզ տարան պահեստային ուղու վրա, և մենք ապրում էինք անշարժ կանգնած գնացքում, ինչպես երկաթուղային բրիգադա, մինչ հիվանդները պառկած էին քաղաքում»⁵⁵: Մանդելշտամներն այցելել են Վյաչ. Իվանովին ու Ս. Գորոդեցկուն, ովքեր այդ տարիներին ապաստանել էին Բաքվում: Ի դեպ, Վյաչ. Իվանովը դժգոհել է, որ իրեն չի հաջողվել Մոսկվա վերադառնալու համար պայմանավորվել «հաղթողների» բոլշևիկների հետ: Նա փորձել է դա անել Մոսկոբսկոյի նախագահ Լև Կամենևի միջոցով, բայց ոչինչ չի ստացվել⁵⁶:

Մանդելշտամները Բաքվից մեկնել են Թիֆլիս, որտեղ էլ ապրել են շուրջ կես տարի: Քաղաք, որի համար չափազանց բնութագրական են «Մթացմինդայի ստորոտում» վիպակում ուսա գրող Ռ. Իվնևի արձանագրած հետևյալ տողերը. «Ոչ մի տեղ այնպես չես գտնում կյանքը, ինչպես այստեղ: Քաղաքը ամբողջովին արևային վառ գույների մեջ է: Այդ պատճառով ցավն այստեղ ավելի ցավոտ է, ուրախությունն՝ ուժեղ, իսկ սերը՝ առավել գեղեցիկ ու կրակոտ: Անգամ գորգերն այստեղ թափ են տալիս առանձնակի ուրախությամբ: Բանջարեղեն ու միրգ վաճառողները ավելի շատ նման են ... գործ չունեցող կատակախոսների: Նրանք չեն կարող հանգիստ խոսել, նրանք պետք է քլքլան, ծիծաղեն, սրամտեն չխնայելով նույնիսկ իրենց սեփական միջերը ... »⁵⁷:

⁵⁵ Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 33–34.

⁵⁶ Նույն տեղում, էջ 332:

⁵⁷ Р. Ивнев. У подножия Мтацминды. Мемуары. Новеллы разных лет. Повесть. М., 1973, с. 158. Ի դեպ, Ռ. Իվնևը Մանդելշտամի մասին գրում է. «Մյուս աջակցությունը (բացի Ս. Եսենինից — Ա. Զ.) ինձ համար եղել է մեզնից առավել ևս «ապաքաղաքականացված» Օսիպ Ման-

Թիֆլիսում Օ. Մանդելշտամը մի կարճ ժամանակ մտերմանում է Վրաստանում խորհրդային Ռուսաստանի դեսպան Բորիս Լեգրանի հետ, ով, ի դեպ, եղել էր Ն. Գումիլյովի գլխավորական ընկերը: Այդ հողի վրա էլ, հավանաբար, Լեգրանը Մանդելշտամին նշանակել է դեսպանատան հաստիքացուցակում իբրև ռեֆերենտ՝ թերթերից քաղվածքներ անելու համար, նաև հատկացրել է սնունդ: Սակայն Ն. Գումիլյովի գնդակահարությունից հետո⁵⁸, որի մասին նրանց հայտնել է դեսպանը, Մանդելշտամներն այլևս դեսպանատուն չեն գնացել⁵⁹: Հիշենք, որ խորհրդային պետական, ռազմական գործիչ, դիվանագետ Բ. Լեգրանը 1920 թ. եղել էր Հայաստանի Հանրապետության հետ բանակցություններ վարող ՌՍՖՖՀ-ի առաքելության ղեկավարը, ՌՍՖՖՀ լիազոր ներկայացուցիչը Հայաստանում,

դելշտամի կողմից: Դա ինձ հատկապես ուրախացնում էր այն ժամանակ: Վլադիմիր Գորդինի, Գեորգի Իվանովի և շատ ուրիշների նման նա ինձնից երես չդարձրեց, այլ հանդիպելիս միշտ համակրանքով ժպտում էր՝ լինելով մի քանի գլուխ բարձր քաղքենիական կարծիքներից ու նախապաշարմունքներից» (նույն տեղում, էջ 56): Ռ. Իվներ Օ. Մանդելշտամի մասին ուշագրավ հուշերում նրան, համարում է՝ «... հենց ինքը դարաշրջան էր ...» (Р. И в н е в. Образ, временем сожженный. Стихотворения: 1904–1981, с. 154): Նկատենք նաև, որ Իվներ Մանդելշտամին նվիրել է «Белая ночь» վերնագրով սոնետ:

⁵⁸ Օ. Մանդելշտամը շատ ծանր է տարել 1921 թ. օգոստոսի 25-ին տեղի ունեցած Ն. Գումիլյովի մահապատիժը: Այդ օրերին նրա մահվան առթիվ գրել է «Լվացվեցի, երբ մթան մեջ թառել ...» բանաստեղծությունը, որը տպագրվել է Թիֆլիսում լույս տեսնող «Фигаро» ռուսական թերթում (բանաստեղծության մասին տե՛ս Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 355): «... ընկերոջ հիշատակի հանդեպ հավատարմության երդման պես մի բան է անցնում Մանդելշտամի ողջ կյանքի միջով, — նկատել է Ս. Ավերինցևը: — 1928 թվի օգոստոսի 25-ին Ախմատովային (Աննա Ախմատովային՝ Ն. Գումիլյովի կնոջը — Ա. Զ.) հղած նամակում ասված է. «Տեղյակ եղեք, որ ես ընդունակ եմ երևակայական զրույց վարել միայն երկու մարդու՝ Նիկոլայ Ստեպանովիչի և Զեզ հետ: Կոյ-յայի հետ զրույցս չի ընդհատվել և երբեք չի ընդհատվի» (Ս. Ավերինցև և. նշվ. հոդվ., էջ 30):

⁵⁹ Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 62–63.

ապա նոյեմբերից ՀՍԽՀ-ում, 1921 թ. մարտից՝ միաժամանակ ղեկավարան Վրաստանում ու Ադրբեջանում: Բացառվում է, որ Հայաստանի, Հայ ժողովրդի կյանքում վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունների մասին Մանդելշտամն ու Լեզրանը զրուցած չլինեն ...

Ինչևէ. Թիֆլիսում Օ. Մանդելշտամն ապրում է Արվեստների տանը: Բանաստեղծի Համար Թիֆլիսյան օրերը եղել են ստեղծագործական բեղմնավոր շրջաններից մեկը. ակտիվորեն տպագրվում է տեղական թերթերում, ելույթներ է ունենում ամենաբազմազան բանավեճերում ու երեկոներում, դասավանդում է Ն. Խոդոտովի Թատերական ստուդիայում և նույնիսկ անդամագրվում է Վրաստանի ուսուցչական միությունն ու ստանում դրամական նպաստ: Զբաղվում է թարգմանչական գործունեությամբ. լուսավորության կոմիսար Կանդելակին «Թարգմանությունների Համար (Մանդելշտամին — Ա. Զ.) դուրս էր գրում չնչին նպաստ»: Թարգմանում է Վաժա Փշավելայի «Гоготур и Апшина» գործը, որը նույն օրերին թարգմանել է նաև Թիֆլիսում բնակվող բանաստեղծ-գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինը⁶⁰: Ի դեպ, կազմակերպվել է այս երկու թարգմանությունների ընթերցում, ապա քննարկում: Օ. Մանդելշտամի այդ գործի թարգմանությունից հատվածներ են տպագրվել «Фигаро» թերթում և «Пламя» ամսագրում: Ռուս բանաստեղծը թարգմանել է նաև «Երկնագույն եղջյուրներ» գրական միավորման անդամներ Տ. Տաբիձեի, Ն. Միցիշվիլիի, Գ. Լեոնիձեի, Վ. Գափրինդաշվիլու գործերից, որոնք լույս են տեսել 1921 թ. վերջին Թիֆլիսում հրատարակված «Վրաստանի բանաստեղծները» վերնագրով ուսուներեն առաջին անթողդիայում: Սակայն դա չի խանգարել, որ Մանդելշտամը «ցասումնալից բանավիճի» ու քննադատի խմբակցությունը (նույնիսկ մամուլով)՝ սիմվոլիզմ դավանելու համար⁶¹:

⁶⁰ Ա. Կուլեբյակինի մասին մանրամասն տե՛ս А. Закарян. Александр Кулебякин и Армения. Ереван, 2003.

⁶¹ Բաքվում և Թիֆլիսում Մանդելշտամի անցկացրած օրերի մասին տե՛ս В. Головин. Նշվ. աշխ., էջ 23–34:

Հավելենք, որ Օ. Մանդելշտամը Թիֆլիսում շփվել է նաև Հայ գրական շրջանակների հետ, որի վկայությունը հետևյալ խոստն իրողությունն է. Վրաստանից մեկնելուց հետո՝ 1922 թ., Թիֆլիսում տպագրվում է Հայտնի Հայ ֆուտուրիստ Կարա-Դարվիշի (Հակոբ Գենջյան)՝ Գր. Ռոբակիձեին նվիրված «Պար լեռների վրա» վերնա-գրով բանաստեղծության ստորև բերվող Մանդելշտամի թարգ-մանությունը՝ «Пляска на горах (Ночной хоровод)».

ПЛЯСКА НА ГОРАХ
(Ночной хоровод)

Посвящ. Гр. Робакидзе

Не плач, не рыдание, не вопленни́к крик,
Подари мне веселье и пиршества́ звон.
Позабыть бы удары и смертны́й стон,
Катафалков пух и умершей лик,
Пустить по миру́ тяжелый дым,
Развеять горечь ды́мных туч,
И кто любим, и кто не любим,
И кто повержен, и кто могуч,
Побежденный, победитель— все прах и дым,
Да пройдут они́ здесь, — мое сердце там,
Забыть, забыть— уйти́ далеко
К шарообразным легким мирам,
По новым звездам взвиться легко.
И только с тобой, только с тобой,
Повелительница́ моей души,
Атом крови́ моей огнево́й.
Пойте мне песни, хоровод, пляши,
Тризну на горах костей соверши.
Пусть бесы топочут и воют глухо, —
Я слышу богов чародейный бег,
На вершинах гор рождение́ духа:
Ночь разрезает человек.
Жизнь вернулась, гроба раскололись,
И славы былой поют руины.


К нагорной крепости взмыл мощный голос:
 Все забыть и ринуться в звездные пучины!
 Через тучи, туманной повитая пряжей,
 С посвистом адским уйдем на высокие края.
 Все позабудем, забудем, забудем⁶².

Անվանի գրականագետ Ալեքսանդր Պարնիսը պնդում է. «Այդ գործի թարգմանությունը վրա աշխատանքը մինչ ազգային մշակույթի հետ ակտիվ շփումը՝ հենց դարձավ հայկական թեմայի սկզբնավորումը, որը բանաստեղծի հասուն շրջանում հանդիսացավ նրա ստեղծագործության կարևոր փուլը»⁶³:

... Մանդելշտամները 1922 թ. նոր տարին դիմավորում են Սոսիսում ուղևորվող «Դմիտրի» անունով շոգենավի վրա, իսկ մարտին արդեն Մոսկվայում էին:

⁶² Բանաստեղծության թարգմանությունը՝ տպագրված փոստաքարտի վրա՝ «Тифлис, 1922 г.» նշումով, և Կարա-Դարվիշի լուսանկարով, պահվում է Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարանում (ԳԱԹ, Հուլային բաժին, Կարա-Դարվիշի ֆոնդ, արխիվ 597): Ճոտոպատճենը տե՛ս հաջորդ էջում:

⁶³ В. Головин. Նշվ. աշխ., էջ 34:




Пляска на горах

(Хочкой хоробод).

Посвящ. Гр. Робакидзе.

Не плач, не рыдание, не воплещи крик,
Подари мне веселье и турнества звон.
Позабить бы удары и смертный стон,
Капатофлов пух и умершей лих,
Пустить по миру тяжёлый дым,
Развезть горечь дынными пуч,
И кто любим, и кто не любим,
И кто повержен, и кто могуч,
Побеждённый, победитель—все прах и дым,
Да пройдут они здесь,—мое сердце там,
Забить, забыть—уйти далеко
К шарообразным легким мирам,
По новым звездам ватится легко.
И только с тобой, только с тобой,
Повелительница моей души,
Атом крохи моей оневои.
Пойте мне песни, хоровод, пляши,
Тризну на грудях костей соверши.



Пусть бесы топчут и воют глухо,—
Я слышу богов чародейный бег,
На вершинах гор рождение дуга:
Ночь разрезает человек.
Жизнь вернулась, гроба раскололись,
И славы былой потоп руины.
К нагорной крети взмыл мощный голос:
Все забыть и ринуться в звездный пучины!
Через тучищбы, туманной повитая прясей,
С посвистом адским уйдём на высокие края.
Все позабудем, забудем, забудем.

Перев. с арм. Осипа Мандельштама.

Произведение Кара-Дарвиша уже вышедшие в свет: "Чаша жизни", "Спящая фея", "Разбитая красавица", "Кто я", "Женщина", "Песни бунтующего тела" (сборник стихов). **Готовятся** к печати: "Гетера", "Катастрофа", "Челнок", "Старым богам", "Лесная нивея", "Странник", "Сирень", "Под люстрами", "Голгова" и т. д.

Все эти произв. приобрести можно у автора.

Օ. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ինչպես մեր կյանքում ամեն լավ բանը, այնպես էլ Հայաստանի ուղևորությունը կազմակերպել է Բուխարինը, — վերհիշում է Ն. Մանդելշտամը: — Առաջին անգամ նա փորձեց մեզ Հայաստան ուղարկել դեռևս քսանական թվականների վերջին: Այն ժամանակ լուսավորության ժողկոմը (նաև՝ ժողկոմխորհի նախագահի տեղակալը — Ա. Զ.) Մուսվյանն էր: Նա Օ. Մանդելշտամին հրավիրեց Երևանի համալսարանում դասախոսություն կարդալու: Առաջին ուղևորությունը խափանվեց Մուսվյանի հանկարծամահ լինելով»⁶⁴: Իսկ ահա թե ինչ է գրել այդ մասին Օ. Մանդելշտամը «Չորրորդ արձակ»-ի 7-րդ գլխում. «Մի հովանավոր ունեի՝ ժողկոմ Մուսվյան — Մուռավյանը (բառախաղ муравей բառից, ծան.՝ թարգմ.), հուդայական երկրի կրտսեր քրոջ՝ հայոց երկրի մրջնային մի ժողկոմ: // Նա ինձ հեռագիր ուղարկեց: // Մեռավ իմ հովանավոր ժողկոմ Մուսվյան—Մուռավյանը: ... // Նա այլևս Մոսկվա չի գա միջազգային վագոնով՝ միամիտ ու հետաքրքրասեր ... Մոտոս նամակ կար՝ ժողկոմ Մուսվյանին հղված: Ես այն տարա Մոսկվայի ամենամաքուր դեսպանական փողոցի վրա գտնվող հայկական առանձնատան (խոսքը Հայկ. ՍՍՀ ներկայացուցչության մասին է — Ա. Զ.) քարտուղարներին: // Քիչ էր մնում Էրիվան գնայի ... Լուսժողկոմի գործուղմամբ՝ կլորգլուխ ու ամաչկոտ ջա-

⁶⁴ Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 241. Արդարության դեմ չմեղանչելու համար՝ նշենք. Ն. Բուխարինը գտավ «հաղորդափոկ»՝ նրա խնդրանքով Վ. Մոլոտովը հանձնարարում է Համկ(բ)Կ Կենտկոմի նախագահության անդամ Ս. Գուսևին, որպեսզի նա կազմակերպի Մանդելշտամի ու նրա կնոջ ուղևորությունը Սուխում, ապա Հայաստան, նաև հետևի նրանց տեղավորմանը, որտեղ էլ նրանք լինեն: Ս. Գուսևը նախապես զանգահարել է տեղական Կենտկոմի քարտուղարներին՝ վերջիններիս խնդրելով ամեն ինչում աջակցել Մանդելշտամներին (նույն տեղում, էջ 168, նաև՝ Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 430):

հեղինակին խեղճուկրակ վանք-համալսարանում սարսափելի դաս-
ընթացներ կարդալու: // Եթե գնալի էրիվան, երեք օր ու գիշեր
կհաճախեի կայարանների մեծ բուֆետները և կարմիր խավիարով
կարագահաց կուտեի: ... // Ճանապարհին կկարդայի Զոլձենկոյի
լավագույն գիրքը (ենթադրվում է՝ «Ո՛ւմ վրա եք ծիծաղում»
պատմվածքների ժողովածուն, 1928 թ. – Ա. Զ.) և կհրճվեի հարյուր
ռուբլի չվագրած թաթարի պես: ... // Հետո արիտվոյուն կվերցնեի
մոխրաջուր բուրդոլ սպիտակեղենի հետ՝ ծղոտե դեղին զամբյու-
ղում, իսկ մուշտակա կախված կլինեի ոսկեջրած մեխին: Եվ էրի-
վանի կայարանում գնացքից դուրս կգայի՝ մի ձեռքիս ձմեռային
մուշտակ, մյուսին՝ ծերունական ձեռնափայտս՝ ցուպն իմ հրեա-
կան»⁶⁵:

1929 թ. հունիսի 14-ին «Պրավդա» թերթի գլխավոր խմբագիր
Ն. Բուխարինը հետևյալ նամակն է գրել ՀՍՍՀ ժողկոմխորհի նա-
խագահ Ս. Տեր-Գաբրիելյանին: «Թանկագին ընկ. Տեր-Գաբրիել-
յան, մեր խոշոր բանաստեղծներից մեկը՝ Օ. Մանդելշտամը, ցան-
կություն ունի Հայաստանում մշակութային բնույթի աշխատանք
ստանալու (օր.՝ հայկական արվեստի, մասնավորապես գրակա-
նության պատմության հետ կապված կամ նման մի բան), – հայտ-
նել է նամակագիրն ու ավելացրել. – Նա շատ կրթված մարդ է և
կարող էր ձեզ մեծ օգուտ բերել: Նրան պետք է միայն հանգիստ
թողնել մի որոշ ժամանակ և աշխատելու հնարավորություն տալ:
Կարող է գործ գրել Հայաստանի մասին: Պատրաստ է սովորել հա-
յոց լեզուն և այլն: Խնդրում եմ, պատասխանեք հեռագրով ձեր ներ-
կայացուցչություն: Ձեր Բուխարին»⁶⁶:

⁶⁵ Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 238: Հմմտ. «Радуга» (Таллин), 1988, № 3, с. 23.

⁶⁶ Г. И. Кубатьян. Место армянской темы в творчестве О. Мандельштама (Уроки Армении). – «Вестник Ереванского универ-ситета», 1989, № 2, с. 11. Հմմտ.: Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 372: Ի դեպ, նկատենք, որ Ն. Բուխարինն այդ թվականին չի եղել «Известия» թերթի գլխավոր խմբագիրը:

Հայաստան գալու Օ. Մանդելշտամի ցանկությունն ամենևին պատահական չէր. իրավացիորեն նկատվել է՝ դրան մեծապես նպաստել են նրա ծանոթությունը՝ 1829 թ. Հայաստան կատարած Պուշկինի ճանապարհորդությունը, 1916 թ. հունվարին Վ. Բրյուսովի ուղևորությունը, 1928 թ. ամռանն ու 1929 թ. գարնանն Ա. Բելլի այցելությունն ու այդ ամենի հանրագումարում՝ Հայաստանի, հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի մասին նրանց գրած հայտնի գործերին: Դրան ավելացնենք և այն, որ, ինչպես վերը նշվեց, 1920-ական թվականների սկզբին Մանդելշտամն եղել էր Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Թիֆլիսում, Բաքվում, ծանոթ էր հայ իրականությանը, թարգմանել էր Կարա-Դարվիշի վերը նշված գործը, Մոսկվայում չփվել էր Պետհրատի խորհրդի նախագահ Ա. Խալաթովի, նաև Ռուսաստանի հասարակական-քաղաքական և մտավորական միջավայրերում մեծ հեղինակություն վայելող գրող Մ. Շահինյանի հետ, ում մասին 1922 թ. գրած «Մուշտակ» («Муштак») ակնարկում կա «զվարճալի» պարբերություն, և ով 1920-ական թվականների կեսերին եղել էր Հայաստանում, Նախիջևանում ու Լեռնային Ղարաբաղում և, ըստ այդմ, քաջ գիտեր մեր ժողովրդի անցյալն ու ներկան:

Ինչևէ. հայերեն սովորելու ցանկությունը շատ մեծ էր, և Օ. Մանդելշտամը գնում է Մոսկվայի Արևելքի ժողովուրդների ինստիտուտ (նախկին՝ Լազարյան ճեմարան): Այդ մասին բանաստեղծը գրում է. «Ինձ ընդառաջ եկավ տխրամած երիտասարդ մի հայ: Խոցոտող տառատեսակներով հաբեթական գրքերի միջավայրում գոյատևում էր նաև, ինչպես ռուսական կաղամբաթիթեռը կակտուանների գրադարանում, չեկկիկ մի աղջնակ:

Իմ սիրողական գալուստը ոչ մեկին չուրախացրեց: Հին հայերենն ուսումնասիրելու հարցում օգնության խնդրանքս չչարժեց այս մարդկանց սիրտը, որոնցից կլինարմատը նաև չէր տիրապետում գիտելիքի բանալուն:

Ի հետևանս անճիշտ — սուբյեկտիվ կողմնորոշման՝ ես վարժվել էի ամեն հայի մեջ բանասեր տեսնել ... Թեև՝ ինչ-որ չափով դա ճիշտ է: Ահա մարդիկ, ովքեր լեզվի բանալիները զնգզնգացնում են անգամ այնժամ, երբ ոչ մի գանձատուփ չեն բացում: ... Տրվեցին

պատվարժան հայ գրողների անուններ, հիշատակվեց ակադեմիկոս Մատր ...»⁶⁷:

Հենց գրադարանում էլ Մանդելշտամը հանդիպում է սովետական պետական ու կուսակցական գործիչ, պատմաբան Աշոտ Հովհաննիսյանին, ով 1928 թ. բնակվում էր Մոսկվայում: Մեջբերենք վերջինիս վերաբերող բանաստեղծի կոլորիտային ու բնութագրիչ տողերը. «... գրադարան մտավ տարեց մի մարդ՝ բռնակալի շարժուձևով ու վեհապանձ կեցվածքով: // Նրա պրոմեթևյան գլուխը մոխրակապույտ-ծխագույն լույս էր ճառագում, որպես կվարցի զորեղ մի լամպ ... Կարծր մագերի կապտասև, հարած-խիզախորեն սպրդած խոպույները կախարդված թռչնափետուրների սնկոտիկային զորութ-յանը մերձ ինչ-որ բան էին հիշեցնում: // Գրքացի լայն բերանը չէր ժպտում՝ վճռաբար հիշեցնելով, թե բառը – աշխատանք է: Ընկեր Հովհաննիսյանի գլուխը տիրապետում էր զրուցակցից հեռանալու ընդունակությամբ, ինչպես լեռնազագաթ, որը պատահաբար գլխի կերպաձևն ունի: Բայց նրա աչքերի կապտա-կվարցային խոժոռութ-յունն արժանի էր ժպտի: // Այդպիսին են խլովթյունն ու երախտա-մոռությունը, որ տիտաններն են մեզ կտակել ...»⁶⁸:

... Երևանից հրավերքի փաստաթղթերին սպասելիս՝ 1930 թ. ապրիլի սկզբին Մանդելշտամները լինում են Սուխումում՝ «Կենտ-կոմի թղթով», հանգստանալու կառավարական ամառանոցում՝ «Օրջոնիկիձեի անվան հանգստյան տանը»: Այդ օրերին Սուխումում բազմաթիվ անվանի մարդիկ են եղել, որոնց հետ Օ. Մանդելշտամը շփվել է⁶⁹: Այսպես, լինելով արբանյակ բանաստեղծ ու գիտնական, արխազական լեզվի ու գրականության ակադեմիայի նախագահ

⁶⁷ Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 249–250:

⁶⁸ Նույն տեղում, էջ 250:

⁶⁹ Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 310, 423. Այդ օրերին Սուխումում հանգստացել են ԽՍՀՄ ապագա ներքին գործերի ժողկոմ Ն. Եժովը, ում հետ բանաստեղծը թեևիս է խաղացել, Աբխազիայի ժողկոմ-խորհի ղեկավար Ն. Լակոբան, «պրոետարական բանաստեղծ» Ա. Բեզիմենսկին, ազգագրագետ, արխազական ժողովրդական երգեր հավաքող Մ. Կովաչը, Թիֆլիսի ազգային թանգարանի տնօրեն Անատոլի Կ.-ն և հայտնի այլ դեմքեր:

Դմիտրի Գուլիայի հյուրը՝ Մանդելշտամը գրում է. «Նա բողոքում էր արխազական այբուբեն հորինելու հետ կապված բարդությունից, հարգանքով էր խոսում պետերբուրգյան խեղկատակ Եվրեինովի մասին (նկատի ունի ռեժիսոր և թատրոնի տեսաբան Ն. Ն. Եվրեինովին – Ա. Զ.), որն Արխազիայում հափշտակված էր այծի պաշտամունքով, և զանգատվում էր լուրջ գիտական հետազոտությունների անմատչելիությունից՝ Թիֆլիսից հեռու գտնվելու բերմամբ»⁷⁰:

Սուխոմինց Մանդելշտամներն ուղևորվում են Նոր Աֆոն, Գուդաուտա, Տիվարչելի, ապա մեկնում են Թիֆլիս:

Գալով Հայաստան՝ Օ. Մանդելշտամը նախ Լենինականում մասնակցում է մայիսյան տոնակատարություններին, ապա ժամանում է Երևան⁷¹: «Մեր հյուրանոցի («Երևան» – Ա. Զ.) փոքրիկ սենյակում միանգամից հայտնվեցին Հայաստանի մշակույթի մասին գրքեր. Ստրժիգուլսկի (խոսքը վերջինիս «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գործի մասին է – Ա. Զ.), հայ տարեգիրներ, Մովսես Խորենացի և շատ ուրիշներ, ինչ վերաբերում էր այդ երկրի տնտեսությանն ու բնությանը, – գրում է Ն. Մանդելշտամը: – Հայաստանի տնտեսության մասին գրքերից Օ. Մանդելշտամն առանձնացրեց արեքսանդրովյան ժամանակի չինովնիկ Շոպենի «Հայաս-

⁷⁰ Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 261:

⁷¹ «Օսիպ Մանդելշտամի (ստեղծագործության – Ա. Զ.) ամերիկյան հրատարակության խմբագիրը՝ <Բ.> Ֆիլիպովը, բոլոր խմբագիրներին հատուկ խորաթափանցությամբ, որոշել է, որ Օսիպ Մանդելշտամն Հայաստան է փախել հնգամյակների կառուցումից ... Դա քաղաքական էժանագին սպեկուլյացիա է, – նկատել է Ն. Մանդելշտամը: – Ծայրամասերում շինարարությունն արտահայտվում էր անհամեմատ ուժեղ, քան կենտրոնում, և Օսիպ Մանդելշտամն ամեն դեպքում դրա դեմ ոչինչ չէր կարող ունենալ: Ինչի՞ց դրդված նա պետք է զայրանար տնտեսության պլանային կազմակերպումից: Մի՞թե բանը դրանում է:

Օսիպ Մանդելշտամի ըմբռնումով Ղրիմը, Վրաստանը և Հայաստանը միայն Սևծովյան էին, դրա միջոցով էր հաղորդակցվելու Միջերկրածովյան համաշխարհային մշակույթին» (Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 241–242):

տանի աշխատանոցային նկարագրությունը» գիրքը⁷²: Նա համեմատում էր երկրի հանդեպ Շոպենի կենդանի հետաքրքրությունը զայրացած և փնթիկնթացող անթիվ «գործուղվածներին» անտարբերության հետ, որոնց հանդիպում էինք հյուրանոցում»⁷³: Առաջին իսկ օրը նրանց մոտ «Երևան» հյուրանոցի նախասրահ է գալիս «հրաշք նկարիչ» Մարտիրոս Սարյանը: Երևանում եղած ժամանակ Մանդելշտամներն այցելում են նրա արհեստանոցը՝ հիանում գեղանկարչի «երկնագույն շրջանի» նկարներով: Հանդիպել են Ա. Թամանյանին ու երիտասարդ ճարտարապետներին, լսել նրանց քննարկումները: Մանդելշտամը հաճախել է Հայաստանի պետական գրադարան, օգտվել նրա ֆոնդերից, ծանոթացել ու շփվել է տնօրենի՝ լրագրող, բանասեր, թարգմանիչ, բառարանագիր, մշակութային գործիչ Մամիկոն Գևորգյանի⁷⁴ հետ, ով «պերճախոս է, խելամիտ ու սիրալիր, բայց նրա էրուզիցիան չափազանց համառ է ու աղմկալից, իսկ խոսքը՝ յուզոտ ու փաստաբանական»⁷⁵: Հետաքրքիր է, որ Մ. Գևորգյանը Մանդելշտամի համար պարսկերեն երգել է մի քանի հատված Ֆիրդուսուց: Բանաստեղծը երևանում նաև լսել է միաձայն երգչախմբի կոմիտասյան կատարումները:

⁷² Յրանսիացի ազգագրագետ, պատմաբան Ի. Ի. Շոպենը 1825 թ. ապրում էր Ռուսաստանում, եղել է Հայկական մարզի եկամուտների ու պետական տուրքի վարչության պետը: Կատարել է վիճակագրական հետազոտություններ: Նրա «Պատմական հուշարձան Հայկական մարզի կացության մասին՝ այն Ռուսական կայսրությանը միացնելու ժամանակաշրջանում» (1852, ռուս.) աշխատությունը 1840-ին (ձեռագիր) արժանացել է ՌԳԱ Դեմիդովյան մրցանակի: Ի դեպ, Օ. Մանդելշտամը գրել է. «Ինձ Հայաստան ոչ ոք չի ուղարկել, ինչպես, ասենք, իշխան Պապկևիչը գրիբոեդովյան գերմանացի և ամենալուսավորված չինոյնիկներից Շոպենին ... » [Օ. Мандельштам. Записные книжки. Заметки. — «Вопросы литературы» (М.,) 1968, № 4, с. 182]:

⁷³ Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 220.

⁷⁴ XX դ. առաջին կեսի նշանավոր մտավորական Մ. Գևորգյանի մասին մանրամասն տե՛ս Ռ. Ղազարյան. Մամիկոն Գևորգյան. — ՊՐՀ, 2008, № 3, էջ 295–302:

⁷⁵ Օ. Մանդելշտամ. Նշվ. գիրքը, էջ 269:

Երևանում Մանդելշտամը ծանոթանում ու մտերմանում է կենսաբան Բ. Կուզինի հետ, ում Մոսկվայի համալսարանը Հայաստան էր գործուղել կարմրորդ միջատի հետազոտություն համար, միջատ, որից ստանում են «հրաշալի բոսորագույն ներկ»՝ որդան կարմիր: Վերջինս ապրում էր Սպանդարյան 92-ում՝ «անչափ սիրալիր մարդկանց՝ Տեր-Օհանյանների տանը»: «Ես ձեզ մոտ էի վազում «Սպանդարյանով» կլլելով շինարարական կսկծացնող փոշին, որով հռչակված է երիտասարդ էրիվանը, — գրել է Օ. Մանդելշտամը: — Բացի այդ՝ ինձ համար սիրելի էին մինչև կնճիռները վերանորոգվող Արարատյան դաշտավայրի անողորկությունները, խորդուբորդներն ու հանդիսավորությունները, քաղաքը, որը կարծես ամբողջովին ներառված էր Աստծուց ներշնչված ջրմուղագործների ջանացման մեջ, և հիմնավոր բերաններով ու հենց գանգի մեջ շաղափված աչքերով մարդիկ՝ հայերը»⁷⁶:

Ինչպես նկատվել է, «Հայոց հինավուրց մշակույթի հետ հանդիպումը նրա համար դառնում է ձևավորող կենսական տպավորություններից մեկը: Հայաստանում սկզբնավորվում է նրա մտերմությունը մի խորունկ, չիտակ, կոմֆորմիզմին բացարձակապես անընդունակ մարդուն՝ Բ. Կուզինի հետ: Այդ մասին ասվելու է. «Երբ նինջ էի մտել անկերտվածք ու անկերպարանք, // Բարեկամությունը, քանց կրակոց, ինձ արթնացրեց»: Եվ հրաշք է տեղի ունենում: «Անկերտվածք ու անկերպարանք նինջն» ավարտվում է: Բանաստեղծություններ են հորդում վերստին»⁷⁷:

Այդ օրերին Երևանում էր գտնվում ռուս խորհրդային գրականությունից ամենաաչքի ընկնող դեմքերից Մ. Շահինյանը: Մանդելշտամները հանդիպում են նրան, որի վկայությունը բանաստեղծի

⁷⁶ Նույն տեղում, էջ 256:

⁷⁷ Նույն տեղում, էջ 36: Բ. Կուզինի հետ Օ. Մանդելշտամի ծանոթություն, ապա մտերմության մասին մանրամասն տե՛ս Օ. Յ. Мандельштам и Б. С. Кузин. Материалы из архива. — «Вопросы истории естествознания и техники» (М.), 1987, № 3, с. 127–144. Օ. Մանդելշտամը Բ. Կուզինին նվիրել է «К немецкой речи» վերնագրով բանաստեղծությունը, որը գրել է 1932 թ. օգոստոսին:

1933 թ. ապրիլի 5-ին գրած նամակն է Շահինյանին՝ Բ. Կուզինին բանտարկությունից ազատելու խնդրանքով (ձերբակալել էին ապրիլի 4-ին): Ահա այդ նամակից հարցին վերաբերող հատվածը. «Սիրելի Մարիետա Սերգեևնա! ... Հիշում եք, Երևանում ... Ձեզ հետ մեր թուղցիկ հանդիպումների թեման ... Նրա (Բ. Կուզինի – Ա. Զ.) անձնականությունը է համակված և իմ բոլորովին նոր արձակը ու իմ աշխատանքի վերջին ամբողջ շրջանը: Նրան և միայն նրան եմ պարտական, որ գրականություն է մտցրել, այսպես կոչված, «հասուն Մանդելշտամի» շրջանը: ... Ինձնից խել են իմ գրուցակցին, իմ երկրորդ ես-ին, մարդու, ում ես կարողացա և ժամանակ ունեի համոզել, որ հեղափոխության մեջ կա և ինտելեկտ, և վիտալիստական խելահեղություն, և կենդանի բնություն պերճանք: ... Մարիետա Սերգեևնա! Ես ուզում եմ, որ դուք հավատաք, որ ես թշնամի չեմ այն ձեռքերին, որոնք բռնել են Բորիս Սերգեևիչին (Բ. Կուզինին – Ա. Զ.), քանի որ այդ ձեռքերն անում են և խիստ, և կենդանի գործ:

Բայց Բորիս Սերգեևիչը գիտակ չէ և այդ պատճառով էլ ինքնին արտաքին ազատությունը, եթե մեր իշխանությունը հնարավոր կհամարի դա նրան վերադարձնել՝ կլինի միայն փոքրիկ հավելյալ այն մեծ ներքին ազատության, որն արդեն նրան տվել է մեր դարաշրջանը և մեր պետությունը:

Ձեր Օ. Մանդելշտամ:

Կներեք, որ իմ ձեռքով չեմ գրել. չեմ կարողանում, թելադրել եմ կնոջս»⁷⁸:

⁷⁸ Օ. Э. Мандельштам и Б. С. Кузин. Материалы из архива, с. 131–132. Այս առնչությամբ Ա. Ախմատովայի հետ Մանդելշտամի մասին խոսելիս Լ. Գինզբուրգը հարցնում է. «– Այդ ինչ է, նրա ձեռքը ամենևին չի գործում: // – Ոչ: Բայց նա թելադրում է, և, ընդհանրապես, դա կարևոր չէ. նա ողջ կյանքում եղել է այդպես անօգնական, որ միևնույն է ձեռքերով ոչինչ չի կարողացել անել» (Л. Я. Гинзбург. О старом и новом. Статьи и очерки. Л., 1982, с. 416): «Ես ձեռագիր նույնպես չունեմ, չունեմ նոթատետրեր, չունեմ արխիվ: Ձեռագիր նույնպես չունեմ, որովհետև երբեք չեմ գրում, – խոստովանել է Մանդելշտամը:

Հավելենք՝ Օ. Մանդելշտամը էլքը սխալվել Մ. Շահինյանին դիմելով. մի քանի օրից Բ. Կուզինին ազատ են արձակում:

Ի դեպ, անչափ խորհրդանշական է, որ կյանքի դժվարին օրերին 1933 թ. դեկտեմբերի 1-ին, Եդիշե Չարենցը, որի նկատմամբ ևս սկսվել էին քաղաքական մեղադրանքներն ու հալածանքները, նենգ հողվածներ էին տպագրվում, նմանատիպ նամակ-խնդրագրով դիմել է Մ. Շահինյանին⁷⁹:

... Մանդելշտամները մեկ ամիս հանգստանում են Սևանում՝ Հայաստանում արհմիությունների առաջին հանգստյան տանը: «Քանի որ նա (Օ. Մանդելշտամը – Ա. Զ.) շատ ծանր էր տանում երեւանյան շոգը և տոթը, նրան առաջարկել են հանգստանալ Սևանի կղզում, և այդպես Մանդելշտամները հայտնվեցին այդ հանգստյան տանը, – վերհիշում է Անահիտ Խոսրովյանը: – Մանդելշտամ ամուսինները երեխաներ չունեին, բայց շատ էին սիրում և փափագում էին երեխաներ ունենալ: Բանաստեղծի կինը երազում էր տղայի մասին < ... > Երբ Օսիպ Մանդելշտամը նստում էր սեղանի մոտ աշխատելու, նա ոտքերի ծայրերի վրա զգուշորեն դուրս էր գալիս, իր հետևից փակելով դուռը, դեպի իրեն էր գրավում լուսամուտի տակ խաղացող երեխաներին, նրանց հեռու էր տանում, որպեսզի չխանգարեին քեռուն բանաստեղծություններ գրել»⁸⁰:

Սևանում Մանդելշտամները շփվում և մտերմանում են ազգագրագետ, պատմաբան ու հնէաբան Ասատուր Խաչատրյանի, Հայաստանի Կենտրոնականի նախագահ, պետական և կուսակցական գործիչ, պատմաբան ու գրականագետ Արտաշես Կարինյանի, գալաուագետ Հովհաննես Սաղաթելյանի, քիմիկոս Ստեփան Համբարյանի, դոկտոր Հերցերգի, ձկնաբան ու միջատաբան Լ. Առնոլդի հետ՝ «Ճանապարհորդություն Հայաստան»-ում յուրաքանչյուրի մասին տալով կենսագրական տեղեկություններ և ինքնատիպ բնութագրություններ:

– Ես միակն եմ Ռուսաստանում, որ գրում է շուրթերով...» (Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 237):

⁷⁹ Մանրամասն տե՛ս Ա. Զարենց. Ե. Չարենցի անտիպ նամակը Մ. Շահինյանին. – ՊԲՀ, 1987, № 2, էջ 226–230:

⁸⁰ Օ. Лекманов. Նշվ. աշխ., էջ 141:

յուններ⁸¹: Ահա թե ինչ է գրում Ն. Մանդելշտամը հայ գիտնականների մասին. «Եգիպտագետների ու դրամագետների՝ հայ գիտնականների հետ հանդիպեցինք Սևանում: Նրանք երկրագնդի բոլոր կողմերից եկել էին իրենց հայրենիքը: Նրանք դուրս եկան իսկական եվրոպացիներ և շատ ավելի էին նման գիտնականների, քան նրանք, որոնց հանդիպել ենք Մոսկվայում, մեծ մասամբ Յեկուբուի հանրակացարաններում ու առողջարաններում: ... Հայ ալևոր գիտնականները տիրապետում էին ոչ միայն տարածական, այլև ժամանակային, այսինքն՝ պատմական տեսողությունը. նրանք կարողանում էին հայացքով թափանցել ժամանակի խորքը: Այնպես որ արդեն մոռացվել են բոլոր գույները, բայց դրանք դեռևս չեն մեռել հայոց պատմական հողի վրա՝ հպարտ իրենց ծեր գիտնականներով»⁸²:

Հայաստանում գտնվելու օրերին Մանդելշտամներն ականջալուր են լինում Արարատ լեռան շրջանում քրդերի ապստամբության և թուրքերի դաժան գործողությունների մասին⁸³: Ն. Մանդելշտամը գրում է. «Քրդերը դարի առաջին քառորդին կոտորել են հայերին, իսկ երկրորդ քառորդին իրենք կոտորվեցին այն տիրոջ կողմից, ով նրանց սպանության էր ուղարկել»⁸⁴: Սա խոստում վկայություն է, որ Օ. Մանդելշտամը քաջատեղյակ էր թուրքերի իրագործած Հայոց ցեղասպանությանը: Իսկ «Հաֆեզի վարդն ես օրորում...» բանաստեղծության մեջ «Հեռու ես ողջդ՝ ետևում սարի»-ն տողը խոսում է այն մասին, որ բանաստեղծը գիտի, թե ովքեր են Արարատ սարի ետևում գտնվող տարածքների իսկական տերերը ...

1930 թ. մայիսից մինչև հոկտեմբերի սկիզբը Մանդելշտամներն ապրում և շրջում են Հայաստանում՝ ցուցաբերելով մեծ հետաքրքրություն Հայաստանի ու հայ մշակույթի հանդեպ. այցելում են

⁸¹ Տե՛ս Օ. Մանդելշտամ. նշվ. գիրքը, էջ 246–249:

⁸² Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 441–442.

⁸³ Այդ իրադարձությունների մասին մանրամասն տե՛ս Ա. Սայիյան. Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համաձիրում, Երևան, 2017:

⁸⁴ Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 447.

պատմաճարտարապետական հուշարձաններ, լինում են Զվարթնոցի ավերակներում («Մէջ փլատակներ. ոչ ... » տողով սկսվող բանաստեղծության մեջ նկարագրվում է Զվարթնոցը), Աշտարակում, Բյուրական գյուղում, բարձրանում Արագածի դարատափերը՝ հայկական ու քրդական քոչատեղերը ... Փորձում է սովորել գրաբար⁸⁵, որոշում գրել «Արշակ և Շապուհ» թեմայով գործ: Դրա առհավատչյան է «Ճանապարհորդություն Հայաստան» արձակ գործի «Այագյազ» բաժնի վերջում պատմիչ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» ազատ վերաշարադրումը՝ Արշակի, Շապուհի, Անհուշ բերդի, Դրաստամատի անունների վկայակոչումներով:

Երևանում Օ. Մանդելշտամի գտնվելու օրերի մասին կա ուշագրավ մի դրվագ՝ կապված Ավանի Հովհան Բագարացի (Կաթողիկե տաճար) ավերակ եկեղեցի կատարած այցելության հետ: Քաղաքի «Царская улица»-ի (ներկայիս՝ Արամի փողոց) բնակիչ հին երևանցիները հիշում են. օրերից մի օր հանկարծ նկատում են, որ երեք օր է, ինչ Մանդելշտամը չի երևում ոչ հյուրանոցում, ոչ էլ Սպանդարյան փողոցում (որտեղ հաճախ էր լինում Բ. Կուզինի հետ հանդիպելու համար): Պարզվում է, որ նա եղել է Ավանում, գննել է մատուռը, քարակոթողները, խաչքարերն ու գիշերել եկեղեցում: «Ինչպես ինքն է ասել, “գրուցել է հեթանոսական վիշապի հետ, որը մայր տաճարի ելքի վերևում է, և առյուծի հետ, որը փոքրիկ բակում

⁸⁵ «Հայերենի առաջին դասն ինձ տվել է Մարգո Վ. անունով մի աղջիկ: Նրա հայրը նշանավոր սփյուռքահայ էր <...> և, կարծեմ, խորհրդային շինարարությանը համակրող հյուպատոս էր՝ ազգային տեսակետ դավանող բուրժուական շրջանակներից <...> Ինչևէ, ես ոչինչ չսովորեցի <...> Բավական չէ, որ նա գուրկ էր մանկավարժական նվագադույն ընդունակություններից, Մարգոն կտրականապես պատկերացում չուներ մայրենի լեզվի խորհրդավորության և սրբազան գեղեցկության մասին» (Օ. Мандельштам. Записные книжки. Заметки, с. 183): Նկատենք նաև, որ Սևանում ուսուցչուհի Ա. Խ.-ն հանձն է առնում Օ. Մանդելշտամին հայերեն սովորեցնել: Ըստ Օ. Մանդելշտամի, Ա.-ին ոգեշնչում էին «Ասեղությունը սպիտակգլարդիականների, արհամարհանքը դաշնակների հանդեպ և մաքուր սովետական ցասումը» (նույն տեղում, էջ 182):

է: Հեթանոսության և քրիստոնեության ամենահազվադեպ սինթեզ⁸⁶: Մանդելշտամն Ավանի տաճարն անվանակոչեց “կողոպտված հեթանոսական փոքրիկ կրպակ” և չէր դադարում զարմանալ շինարարի ճարտարապետական մտահղացումով⁸⁶: Նկատենք, որ պահպանվել է այդ իրադարձությունն արձանագրած խմբակային մի լուսանկար, որտեղ Մանդելշտամներից բացի Մ. Շահինյանի ամուսինն է՝ բանասեր, թարգմանիչ Յա. Խաչատրյանցը և մի խումբ երեխաներ: Ի դեպ, այդ լուսանկարը միակ վավերագիրն է Հայաստանում Մանդելշտամների գտնվելու մասին:

Ն. Մանդելշտամը Հայաստան գալու կապակցությամբ գրում է. «Մանդելշտամի համար Հայաստան գնալը վերադարձ էր դեպի հարազատ եզերք՝ դեպի վայրն այն, ուր սկզբնավորվել էր ամենայն ինչ, հայրերի մոտ՝ դեպի ակունքը: Տեական լուսությունից հետո բանաստեղծությունները նրան վերադարձան Հայաստանում և այլևս երբեք չլքեցին ...»⁸⁷: Ռուս բանաստեղծի համար Հայաստանը «Երկրի գիրքն է ... որով սովորել են առաջին մարդիկ»: «Զկա ոչինչ ավելի ուսանելի ու բերկրալի, քան երբ մխրձվում ես բոլորովին այլ մի ուսայի հասարակության մեջ, որին հարգում ես, որին ցավակցում ես, որով օտարի տեսանկյունից հպարտանում ես: Հայերի լեցունությունը կենսանքով, նրանց կոպիտ քնքշությունը, նրանց ազնվաբարո աշխատանքային ջանքով լեցուն ոսկրածուծը, նրանց անբացատրելի նողկանքն ամեն կարգի մետաֆիզիկայի հանդեպ և սքանչելի մտերմավարությունը ունի իրերի աշխարհի հետ— այդ ամենն ինձ ասում էր. դու արթնություն մեջ ես, մի՛ վախեցիր քո ժամանակից, մի՛ խորամանկիր, — գրում է Օ. Մանդելշտամը: — Եվ արդյոք սա այն պատճառով չէ՞ր, որ ես գտնվում էի իր առուծախիչ գործունեությամբ հռչակված մի ժողովրդի մեջ, որն, ընդամենը, ապրում է ոչ թե ըստ կայարանային և կամ հիմնարկային, այլ ըստ արևային ժամացույցի, որպիսին տեսել եմ Զվարթնոցի ավերակներում աստղա-

⁸⁶ См. А. К а з и н я н . Товар из языческой разграбленной лавки. — «Голос Армении», 26. II. 2002; նաև՝ Г. К у б а т ь я н . Ворованный воз- дух. Статьи и заметки, с. 18.

⁸⁷ Օ. Մ ա ն դ ե լ շ տ ա մ . Նշվ. գիրքը, էջ 372:



Զախից աղ. Յա. Ս. Խաչատրյանց,
Ն. Յա. Մանդեկչտամ, Օ. Է. Մանդեկչտամ
և մի խումբ երեխաներ: Երևան, Ավան, 1930 թ.:

բաշխական անվի՞, թե՞ քարի մեջ ներմուծված վարդի կերպարան-քով»⁸⁸:

Ինչևէ. «Մենք շատ ենք շրջել Հայաստանով և շատ բան ենք տեսել, թեպետ, անշուշտ, ոչ ամենը, ինչ կցանկանայինք: Մարդկանց քիչ ենք ճանաչել»⁸⁹, – վկայում է Ն. Մանդելշտամը: Ահավասիկ, այս վերջին նախադասության խոսուեն իրողությունը հետևյալ փաստերն են: Այսպես, նշանավոր գրականագետ Լ. Մկրտչյանը գրում է. «1959 թ. սեպտեմբերին Օսիպ Մանդելշտամի մասին ինձ հարցրեց Իլյա Էրենբուրգը: Նա Հայաստան էր եկել և հետաքրքրվում էր, մասնավորապես, այն բանով, թե մեզանում գիտեն Մանդելշտամին՝ Հայաստանի մասին հանճարեղ բանաստեղծությունների հեղինակին:

Ես ոչինչ չգիտեի ռեպրեսիայի ենթարկված բանաստեղծի՝ Մանդելշտամի մասին (մահացել է 1938 թ. դեկտեմբերին ճամբարային հիվանդանոցում):

Այստեղ նրան համարյա ոչ ոք չգիտի, – ասաց Էրենբուրգը: – Միայն Մարտիրոս Սարյանն ու Սարյանի որդին՝ Սարիկն են հիշում նրա բանաստեղծությունները»⁹⁰:

Համանման մի պատմություն էլ առնչվում է «չնորհազրկված» ոռու գրող Վ. Գրոսմանի հետ. 1961 թ. նոյեմբերի 3-ին գալով Հայաստան, երկու ամիս ապրելով այստեղ, ստեղծելով հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին նվիրված «Բարին ընդ ձեզ: Ճամփորդական նոթեր»-ը՝ Հրաչյա Քոչարի (գրքում գրող Մարտիրոսյան է հիշատակված) միջոցով հետաքրքրվել է Հայաստան կատարած Մանդելշտամի այցով, հայկական թեմայով վերջինիս գրած գոր-

⁸⁸ Նույն տեղում, էջ 249:

⁸⁹ О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с. 78.

⁹⁰ Л. М. Мкртчян. “... И каждое слово – скоба”. – Л. М. Мкртчян. Слепой, но не настолько. Художественная публицистика. Литературная критика. Ереван, 1998, с. 220; տե՛ս նաև՝ Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки, с. 73.

ծերով ու պարզվել է՝ ավագ սերնդի գրողներից և ոչ մեկն այդ ամենից տեղյակ չէ⁹¹:

... Ի դեպ, ինչպես տեղեկանում ենք Օ. Մանդելշտամի մասին Բ. Կուզինի գրած հուշերից, Մանդելշտամները տրամադրված են եղել հիմնավորվել Հայաստանում. «Երևանյան վերջին օրերն անցան ապագայի մասին անվերջ խոսակցություններով: – Գնա՛լ Մոսկվա և ձգտել հասնելու ինչ-որ նոր բանի, ինչ-որ կերպ տեղավորվել այնտեղ կամ մնալ Հայաստանում: Դժվար է հաշվել, քանի անգամ այդ հարցի որոշումը փոփոխվեց: Բայց իմ մեկնելու օրը վերջնականապես որոշվեց: – Հնարավոր է միայն մի բան. մնալ այստեղ: Միայն հայկական հնագույն մշակույթի պայմաններում, Հայաստանի կյանքի, պատմության և արվեստի մեջ խորանալով (նկատի էր առնվում, իհարկե, և հայերենին ամբողջովին տիրապետելը) կարող էր վրա հասնել ստեղծագործական լեթարգիայի ավարտը: Վերադարձը Մոսկվա միանգամայն բացառվում էր: Իմ մեկնելու նախօրյակին ես հրաժեշտ տվեցի Մանդելշտամներին, ինչպես մենք վստահ էինք, ընդմիջւո՞ւմ»⁹²: Կյանքը, սակայն, այլ կերպ զառավորվեց ...

⁹¹ В. Гроссман. Добро вам! Рассказы. М., 1967, с. 210. Տե՛ս նաև՝ Н. А. Гончар-Ханджян. Мандельштам и Армения. – О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с. 7; Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки, с. 73.

⁹² Б. С. Кузин. Об О. Э. Мандельштаме, с. 140.

ԳԼՈՒԽ 4
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՇՈՒՇԻՈՒՄ

Շուշի քաղաքը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային խոշոր կենտրոններից է: Այնքան հայտնի, որ դեռևս 1837 թ. այդտեղ է եղել ոռոս մեծ բանաստեղծ Մ. Լերմոնտովը: Իր բարեկամ Ս. Ռաևսկուն գրած նամակներից մեկում նա հայտնում է. «Այն օրվանից, ինչ դուրս եկա Ռուսաստանից, Կիզլյարից մինչև Թաման անցել եմ լեռներով, եղա Շուշի քաղաքում, Կուբա, Շամախի, Կախեթ քաղաքներում» (ընդգծումը մերն է— Ա. Զ.)⁹³:

1920 թ. մարտի 23—26-ին թուրք-աղբրեջանական զորքերն ու մահմեդականներն ավերեցին հնօրյա բերդաքաղաքը և կոտորեցին հայ ազգաբնակչությանը: Այդ մասին կան բազում վկայություններ, գրվել են հոդվածներ, եղել են հրապարակումներ հայ և օտարազգի բազմաթիվ մտավորականների, հասարակական-քաղաքական գործիչների կողմից: Այսպես, Մ. Շահինյանը 1920-ական թվականներին ճամփորդել է Անդրկովկասում՝ Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Լեռնային Ղարաբաղում ու Նախիջևանում, և այդ մասին թողել է ուշագրավ նոթեր: Ղարաբաղի մասին ակնարկի «Շուշիի ուրվականը» VI գլխում արձանագրել է. «Առաջինը, որն ինձ ապշեցրեց լուսթյունն էր: Այդպիսի սարսափելի լուսթյուն ես ոչ մի տեղ, երբևիցե չեմ զգացել, և դա միանգամից թվում է անբնական: Հանկարծ քեզ թվում է, որ լուսթյունը շնչում է. քարերը քչփչում են, տարուբերվում են, խշխշում են և գլխիդ մազերը բիզ-բիզ են կանգնում: 1920 թվականի մարտին այստեղ երեք օրում ավերել ու կրակի են մատնել 7.000 տուն ու մորթել են, թվերը տարբեր են ասում. ոմանք ասում են 3—4 հազար հայ, ոմանք՝ 12 հազարից ավելի: Փաստ է, որ 35 հազար հայերից Շուշիից ոչ ոք չէր մնացել: Ինչ-որ տեղ առուներում դեռ կարելի էր տեսնել կանացի մազափնջեր՝

⁹³ Վ. Սևյան. Շուշի, Երևան, 1991, էջ 118: Ի դեպ, Միքայել Հարությունյանն այդ փաստի առթիվ գրել է «Լերմոնտովը Շուշիում» վերնագրով բանաստեղծությունը (նույն տեղում, էջ 118—119):

լերդացած սև արյունով: Երևակայություն ունեցող մարդն այստեղ դժվար է շնչում. քայլում ես, քայլում, քայլում համատարած ածխացած շենքերի մնացորդների, ավելի ճիշտ՝ պատերի կողքով, շտապում ես գնալ և վախենում ես, թե երբեք դուրս չես գա ...»⁹⁴:

Իտալացի պատմաբան, աստվածաբան, գրող ու թարգմանիչ Ջովաննի Գուայտայի «Ճիշ Արարատից. Արմին Վեգները և հայերի ցեղասպանությունը» գրքում էլ կարդում ենք. «1920 թ. մարտին թուրքերը և ադրբեջանցիները կատարում են նոր սարսափելի ջարդ Շուշի քաղաքում: Շուշին Ղարաբաղում հայկական կյանքի շատ կարևոր մշակութային կենտրոն էր: XIX դարից այն ուներ իր վանքը, իր եկեղեցին, թատրոնը, հիվանդանոցը, թեմական դպրոցը, լույս էին տեսնում հայերեն գրքեր և ամսագրեր: XIX դարի վերջին հայերը կազմում էին քաղաքի բնակչության ավելի քան 60 տոկոսը: Ընդամենը մեկ օրում՝ 1920 թ. մարտի 22-ին (23-ին՝ Ա. Զ.), թյուրքական կատաղությունն ավերեց հազարավոր հայկական տներ, քանդեց շատ եկեղեցիներ, գրադարաններ, տպարաններ. դրա զոհը դարձավ ավելի քան 30.000 մարդ: Այդպես քեմալականները Շուշիում կրկնեցին այն, ինչ երիտթուրքերը կատարել էին Բաքվում (նկատի ունի Բաքվի 1918 թ. սեպտեմբերյան դեպքերը՝ Ա. Զ.)»⁹⁵:

Խոստում են նաև Օ. Մանդելշտամի ու նրա կնոջ անդրադարձներն այդ ողբերգական իրադարձություններին:

Հայաստանից Թիֆլիս վերադառնալիս՝ Շուշիի 1920 թ. մարտյան կոտորածներից 10 տարի անց, Մանդելշտամները լինում են հայկական հինավուրց այդ քաղաքում: Հարց է ծագում՝ ինչո՞վ էր պայմանավորված նրանց այցը Շուշի: Կարծում ենք, դրան մեծապես նպաստել են Մ. Շահինյանի վերը նշված ուղևորությունը և քաղաքի նկարագրությունը, որին, անշուշտ, ծանոթ է եղել ուսու բանաստեղծը, հայաստանյան չփումները մտավորականության հետ,

⁹⁴ М. Шагинян. Советское Закавказье. Очерки 1922–1930. Л.–М., 1931, с. 362. Ի դեպ, գիրքը նվիրվել է՝ «Я. С. Хачатрянцу, мужу и товарищу».

⁹⁵ Дж. Гуайта. Крик с Арарата: Армин Вегнер и геноцид армян. М., 2005, с. 46.

նաև՝ ծնունդով շուշեցի Ս. Տեր-Գաբրիելյանը, ում հոգածություն տակ են եղել Մանդելշտամները Հայաստանում:

Շուշիից ստացած սահմուկեցուցիչ տպավորությունների մասին Ն. Մանդելշտամն իր հուշերում ունի ուշագրավ տեղեկություններ: Փոքր-ինչ ծավալուն այդ հատվածը բերենք ամբողջությամբ. «... վերջին մեկնումը էրիվանից, Հայաստանում մեր ճամփորդության ավարտը: Լուսաբացին մենք ավտոբուսով Գյանջայից (Գանձակից – Ա. Զ.) մեկնեցինք Շուշի: Քաղաքն սկսվում էր անվերջանալի գերեզմանոցով, ապա՝ փոքրիկ շուկայի հրապարակին էր, ուր իջնում են հոշոտված քաղաքի փողոցները: Մեզ արդեն վիճակված էր տեսնել բնակիչների կողմից լքված գյուղեր, որ մի քանի կիսաքանդ տներից էին բաղկացած, բայց երբեմնի, ինչպես երևում էր, հարուստ և բարեկարգ այս քաղաքում աղետի ու մորթի պատկերները սոսկալիորեն դեռ աչքի առաջ էին: Մենք անցանք փողոցներով, և ամենուրեք նույնը՝ անտանիք, անլուսամուտ, անդուռ տների երկշարը: Լուսամուտների բացվածքներից երևում էին դատարկ սենյակները, երբեմն՝ պաստառների ծվեններ, կիսաքանդ վառարաններ, երբեմն՝ ջարդուփշուր կահույքի մնացորդներ: Տները նշանավոր վարդագույն տուֆից էին, երկհարկանի: Բոլոր միջնորմները քանդված էին, և այդ կմախքների արանքից ամենուր թափանցում էր կապույտ երկինքը: Ասում են, թե կոստորածից հետո բոլոր ջրհորները լեփլեցուն են եղել դիակներով: Եթե որևէ մեկը ողջ է մնացել, ապա փախել է մահվան այդ քաղաքից: Բոլոր լեռնակիպ ճանապարհներին մենք ոչ մի մարդու չհանդիպեցինք: Միայն ներքևում, շուկայի հրապարակում, գեռում էր մի խումբ ժողովուրդ, բայց նրանց մեջ՝ ոչ մի հայ, միայն մուսուլմաններ: Օ. Մ.-ի տպավորությունն այն էր, թե շուկայի մուսուլմանները՝ այն մարդասպանների մնացուկներն են, ովքեր մի տաար տարի առաջ ավերել են քաղաքը, միայն թե դա նրանց օգուտ չտվեց. արևելյան թշվառություն, հրեշավոր ցնցոտիներ, դեմքերին՝ թարախածոր պալարներ: Եգիպտացորենի ալյուրի, կողրի, բլիթների առևտուր ... մենք չհամարձակվեցինք բլիթներ գնել այդ ձեռքերից, թեև ուտել էինք ուզում ... Եվ ջուր էլ չես խմի այս ջրհորներից ... Քաղաքում ոչ միայն հյուրանոց չկար, այլ նույնիսկ եկվորների համար «օբչչո» կոչվող սենյակներ, ուր կանայք ու տղամարդիկ միասին էին քնում: Գյանջայի ավտոբուսը մեկնում էր առավոտյան

... Մեզ առաջարկեցին գիշերել իրենց մոտ, բայց ես վախենում էի արևելյան թարախապալարներից, իսկ Մանդելշտամը չէր կարողանում վանել այն միտքը, թե մեր դիմաց ջարդարարներ ու մարդասպաններ են: Մենք որոշեցինք մեկնել Ստեփանակերտ՝ մարզային քաղաք: Այնտեղ հասնել կարելի էր միայն կառքով: Ահա և մեզ հանդիպեց անքիթ մի կառապան, միակը իջևանատնում, կաշվե դիմակաչուկով, որը ծածկում էր նրա քիթը և դեմքի կեսը: Իսկ հետո ամեն ինչ ճիշտ այնպես էր, ինչպես բանաստեղծություն («Ճայտոն-չին» – Ա. Զ.) մեջ է. և մենք չէինք հավատում, թե նա մեզ իրոք կհասցնի Ստեփանակերտ. մենք անցանք տուն դարձող հոտից: Այնտեղ մենք գիշերեցինք «օբչոյում», իսկ առավոտյան առանց դժվարություն ապտոբուսի տոմս ստացանք (մարզկոմի միջոցով) և վերադարձանք Գյանջալի թե Նուխու երկաթուղի»⁹⁶:

Ահա այսպիսի ցնցող տպավորություն է թողել Շուշին Մանդելշտամների վրա՝ քաղաքի ավերումից տասը տարի անց:

⁹⁶ Օ. Մ ա ն դ ե լ շ տ ա մ. նշվ. գիրքը, էջ 359–360: Պատմական իրադարձություններին անդրադարձը նպատակ ունի ոչ միայն վերհիշել անցյալը, այլև դրանից դասեր քաղել: Նման դրվագներից է Շուշի քաղաքին վերաբերող վերը ներկայացված պատմական իրողությունը: Այդ ամենը խորհրդային տարիներին դրսևորվեց հայերի ինքնության դեմ աղբրեջանական պետական մակարդակով սանձազերծած ոտնձգություններով: Սակայն 1992 թ. մայիսի 8–9-ին հայկական զինված ուժերն ազատագրեցին քաղաքը: Չհամակերպվելով ստեղծված իրավիճակի հետ՝ Ադրբեջանը Թուրքիայի անմիջական մասնակցությամբ և միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ, իսրայելցի ռազմական մասնագետների ու ռազմատեխնիկայի օժանդակությամբ 2020 թ. սեպտեմբերի 27-ին ագրեսիա սանձազերծեց Արցախի դեմ՝ դավադրաբար տիրանալով նաև Շուշիին: 1920 թ. Շուշիի հայ բնակչության ջարդերն ու 2020 թ. քաղաքի զավթումն Արցախի և հայ ժողովրդի հանդեպ ցեղասպան քաղաքականության դրսևորում են, որն անարձագանք մնաց միջազգային հանրության կողմից ...

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԸ:
ԹԻՖԼԻՍԱՆ ՕՐԵՐԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ

Մանղելչտամները Հայաստանից մեկնում են Թիֆլիս, որտեղ մնում են մինչև 1930 թ. նոյեմբերի 5-ը: Այստեղ Օ. Մանղելչտամը գրում է «Հայաստան» բանաստեղծությունների շարքը, որը 1931 թ. տպագրվում է «НОВЫЙ МИР» ամսագրում՝ «Հայաստան: Տասներկու բանաստեղծություն: Օ. Մանղելչտամ» վերնագրի ներքո⁹⁷: Հետագայում գրել է Հայաստանին առնչվող ևս հինգ բանաստեղծություն, որոնք, սակայն, չարքի մեջ չեն մտել: Իրապես, չարքում զգացվում է աստվածաշնչյան ոգի, Հայաստանը ներկայացված է հոգևոր կերպարով՝ ժողովրդի պատմական ճակատագիրը, նրա լեզուն և մշակույթը, պատկանելությունը եվրոպական աշխարհին, մյուս բանաստեղծություններում կերտել է Հայաստանի առավել «երկրային» կերպարը, արտացոլել ժողովրդի աշխատանքը, նրա կենցաղը⁹⁸: «30-ական թվականների Մանղելչտամի բանաստեղծություններում կա և վախ, և շփոթվածություն, և հուսահատություն, իսկ դրանց հետ ապրում է կենցաղային երևույթների ինչ-որ աճող հիացմունք: Նա սիրահարվածությամբ լեցուն ստեղծում է գործեր պատմության, արվեստի, կյանքի մասին: Այդպիսին է «Հայաստան» չարքը, որով 1930 թվականին սկսվեց Մանղելչտամի ստեղ-

⁹⁷ Армения. Двенадцать стихотворений. О. Мандельштам. – «Новый мир» (М.), 1931, кн. третья, март, с. 62–63. Ի դեպ, այս նույն համարում է տպագրվել Մ. Շահինյանի «Հիդրոցենտրալ» վեպի երկրորդ մասը (էջ 5–17), իսկ նախորդ մասերը հրատարակվել են ամսագրի 1930 թ. գիրք 1–7, 10-ում:

⁹⁸ Օ. Մանղելչտամի ծննդյան 125-ամյակի առթիվ Հայաստանի պատմության թանգարանը հրատարակել է չքեղ ալբոմ-կատալոգ, որտեղ զետեղված լուսանկարները մեկնաբանվել են բանաստեղծի «Հայաստան» չարքից բերված խոսուեն քաղվածքներով ու մեկնաբանություններով. տե՛ս Армения по Мандельштаму. Армянская фотография 1878–1920 гг. Альбом-каталог. Ереван, 2016.

ծագործական վերջին շրջանը»⁹⁹, — գրել է ռուս գրականագետ, գրող Լ. Գինզբուրգը «Օսիպ Մանդելշտամի պոետիկան» հոդվածում:

Ըստ էության, Հայաստանին նվիրված բանաստեղծությունները հանգամանորեն քննարկվել են, վեր են հանվել ու պարզաբանվել Մանդելշտամի պոետիկայի խորքային, մասնավորապես սիմվոլ-ներին վերաբերող հարցերը¹⁰⁰, ուստի բավարարվենք ասվածով:

... Այդ օրերին Թիֆլիսում է եղել նաև Եղիշե Չարենցը: Հենց այստեղ էլ նրանք ծանոթանում ու մտերմանում են: Այդ մասին Ն. Մանդելշտամը գրում է. «Հիմնական բարեկամությունը մեզ սպասում էր Թիֆլիսում: Հյուրանոցում մեզ մոտ եկավ Եղիշե Չարենցը, և մենք նրա հետ անցկացրեցինք երկու կամ երեք շաբաթ, հան-

⁹⁹ Л. Я. Гинзбург. *Նշվ. աշխ.*, էջ 288:

¹⁰⁰ Հատկապես խոր, նուրբ, մանրակրկիտ դիտարկումներով և զուգահեռներով առանձնանում են Գ. Կուբատյանի աշխատանքները. տե՛ս Գ. Кубатьян. Солнечные часы поэзии. Армянская тема в творчестве О. Э. Мандельштама. — «Литературная Армения», 1974, № 10, с. 103–116; *Ն ու լ յ ն ի՝* Место армянской темы в творчестве О. Мандельштама (Уроки Армении). — «Вестник Ереванского университета», 1989, № 2, с. 11–20; *Ն ու լ յ ն ի՝* Стихотворение и цикл (две ипостаси Армении в поэзии О. Мандельштама). — «Вестник Ереванского университета», 1991, № 1, с. 79–88; *Ն ու լ յ ն ի՝* От слова до слова. Комментарий к циклу О. Мандельштама «Армения». — В кн.: Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки, с. 7–66. *Տե՛ս նաև՝* И. М. Семенко. Ранние редакции и варианты цикла «Армения». — В кн.: О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с. 89–111; Н. А. Гончар-Ханджян. Мандельштам и Армения. — О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с. 5–11; М. Р. Андреева. Армянские фрески Осипа Мандельштама. — «Вестник Ереванского университета», 1995, № 1, с. 67–77; *Ն ու լ յ ն ի՝* Пушкинские мотивы в стихотворной «Армении» О. Мандельштама. — «Вестник Ереванского университета», 1999, № 2, с. 63–70; *Ն ու լ յ ն ի՝* Армянские фрески Осипа Мандельштама. Ереван, 2001; Н. А. Гончар, М. Р. Андреева. О некоторых ключевых образах цикла «Армения» О. Мандельштама. — «Вестник Ереванского университета», 1996, № 2, с. 82–93 և այլն:

դիպելով համարյա ամեն օր: Ես հասկանում եմ, թե ինչու ընկերական ազատ հարաբերությունները սկսվեցին Չարենցի համար օտար թիֆլիսում, այլ ոչ թե Երևանում, բայց բանը դրանում չէ...¹⁰¹: Ես հիշում եմ, թե ինչպես սկսվեց ծանոթությունը: Մանդելշտամը Չարենցի համար կարդաց Հայաստանի մասին առաջին բանաստեղծությունները՝ նա դրանք այն ժամանակ նոր էր սկսել գրել, Չարենցը լսեց և ասաց. «Ձեզանից, թվում է, գիրք է հորդում»: Ես հիշում եմ այդ խոսքերը, քանի որ Մանդելշտամն ինձ հետո ասաց. «Դու լսեցիր, ինչպես նա ասաց՝ նա իսկական բանաստեղծ է»: Ես այն ժամանակ դեռևս չգիտեի, որ բանաստեղծի համար «գիրքը»՝ դա ամբողջական ձևակառույց է, մեծ միասնություն: Հետո ինչ-որ առիթով Պաստեռնակն ինձ ասաց. «գրքի կազմավորման հրաշքի» մասին և նույնն ասաց Աննա Անդրեևնա-Անուշը (Աննա Ախմատովա— Ա. Զ.): Այդ ամենը գումարովեց Եղիշե Չարենցի խոսքերին, և մենք միշտ հիշում էինք, որ Երևանում ապրում է իսկական բանաստեղծ: Ես ուրիշ ավելի բան չեմ հիշում նրա խոսքերից, քանզի չի կարելի գրառել ամուսնու կամ բարեկամի խոսքը, որոնց հետ թեյ ես խմում, զբոսնում ես և փնտրում, թե որտեղ կարելի է գնել ծխախոտ: Այն ժամանակ հանկարծ ծխախոտի ճգնաժամ եղավ, և տղամարդիկ ծանոթություն հաստատեցին մի խումբ տղաների հետ, քանի որ առանց ծխախոտի անհնար է զրուցել, իսկ նրանք խոսում էին շատ և երկար: Հնարավոր է, Չարենցի խոսքն այն մասին, որ գիրք է հորդում, այն բարեկամական ողջույնն էր, առանց որի չի կարող աշխատել ոչ մի բանաստեղծ, իսկ մեր կյանքում դա հեշտ չէր ստանալ: Հայաստանը, Չարենցը, համալսարանական ծերունիները, երեխաները, գրքերը, հրաշալի երկիրը և դրանցից ընձյուղված ճարտարապետությունը, միաձայն երգեցո-

¹⁰¹ Նկատենք, որ այս առումով առնվազն տարօրինակ է Գուրգեն Մահարու այն պնդումը, թե Մանդելշտամին հանդիպել է 1930 թ. ամռանը «Երևան» հյուրանոցի նախասրահում, և որ իրեն նրա հետ ծանոթացնողը եղել է Ե. Չարենցը (տե՛ս «Литературная Армения», 1966, № 1, с. 47–48): Ի դեպ, Չարենցը հունիսի 1-ից պետհրատի գեղարվեստական բաժնի վարիչն էր ու հաճախ էր լինում թիֆլիսում, այցելում էր «Հայարտուն», զրուցում գրողների հետ, նրանց ստեղծագործությունները տպագրելու համար պայմանագրեր կապում:

ղությունը (կոմիտասյան — Ա. Զ.) և այս երկրում կյանքի ամբողջ դրվածքն այն է, ինչը Մանդելշտամին տվեց «երկրորդ շնչառություն», որով նա ապրեց իր ողջ կյանքը»¹⁰²:

Ի դեպ, ամենայն հավանականությամբ, Չարենցի և Մանդելշտամների մտերմությունն է նպաստել, որ նա թարգմանի Ն. Գոմիլյովի «Վեցերորդ զգացմունք» բանաստեղծությունը:

Նկատենք, որ Թիֆլիսում Օ. Մանդելշտամին հովանավորել է Անդրկովկասյան երկրամասի կուսակցության առաջին քարտուղար Բեսո Լոմինաձեն, որը խոստացել է նրան աշխատանքի տեղավորել արխիվում և ապահովել բնակարանով: Սակայն Բ. Լոմինաձեն մեղադրվում է կուսակցության դեմ կատարած հայտնի ոստիկանությունների համար, և նրան չտապ կանչում են Մոսկվա: «Հենց որ թնդաց Լոմինաձեի ողբերգությունը, ում մոտ՝ մարզկոմում, Օ<սիպ> Մ<անդելշտամ> երեք-չորս անգամ եղել էր ընդունելության, նկատեցինք, որ մեր հետևից, ուր էլ որ գնում էինք, լրտեսը պոկ չի գալիս: Հավանաբար, տեղական մարմինները որոշել էին ամեն դեպքում հետևել շնորհագրկված երևելի անձի առեղծվածային այցելություններին: Հենց այդ ժամանակ էլ հասկացանք, որ Թիֆլիսում անելիք չունենք և շտապ ծլկեցինք Մոսկվա»¹⁰³:

¹⁰² Օ. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки, с. 79. Ծխախոտի փնտրտուքի հետ կապված տե՛ս նաև Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 438. Երևանում Ե. Չարենցի ու գրական այդ գործիչների հետ չհանդիպելու, ինչպես նաև հայ բանաստեղծի հետ Մանդելշտամի հավանական զրույցների թեմաների, երկու բանաստեղծների ստեղծագործությունների, կյանքի ողբերգական ընթացքների զուգահեռների մասին (մասնավորապես Մանդելշտամի հետ կապված Ստալինի զանգը Պաստեռնակին, 1935 թ. դեկտեմբերի 30-ին կրեմլում Չարենցով Ստ. Զորյանից Ստալինի հետաքրքրվելը, բանաստեղծների նամակ-խնդրագրերը Մ. Շահինյանին) հետաքրքիր դիտարկումներ ունի Գ. Կուբատյանը. տե՛ս Г. Кубатьян. После ин-термедии, или мало о них было линейного. Егише Чаренц и Осип Мандельштам. — В кн. Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки, с. 71–87.

¹⁰³ В. Головин. Նշվ. աշխ., էջ 44:

«ՖԱՅՏՈՆՉԻՆ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ
ԳՐԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹԸ

«Հայաստան» բանաստեղծությունների շարքից հետո՝ 1931 թ. հունիսի 12-ին, Շուշիից ստացած ծանր տպավորությունը արտացոլված է Օ. Մանդելշտամի «Փայտոնչին» բանաստեղծության մեջ: Դա վկայում է, որ Հայաստանը ուսմ բանաստեղծի համար ոչ թե պատահական հրապույր է եղել, այլ կենսագրական փաստ, նաև, որ հայկական թեման նրա համար ոչ թե տեղային, այլ համընդհանրական, կարելի է ասել՝ մետաֆիզիկական—գոյաբանական բանալի է եղել՝ լինելիության ողջ ողբերգականությունը բացելու համար¹⁰⁴: «Նրա թեման կառապանն է, որն անհայտ է, թե ուր է տանում,— ժանտախտի նախագահը (սա հղում է Պուշկինի «Խրախճանք ժանտախտի պահին» փոքրիկ ողբերգությանը— Ա. Զ.), դիմակավոր մի ոմն, ումից կախված ենք մենք ... Մանդելշտամը վաղուց նկատել էր, որ մենք ոչինչ չգիտենք նրանց մասին, ումից կախված է մեր ճակատագիրը ... Մենք ավելի քիչ գիտենք այդ ժանտախտային խնջույքի նախագահների մասին: Բանաստեղծությունը ծնվեց մասնավոր դեպքից և ավելի լայն գույքորդությունից՝ այդտեղ է նրա իմաստը: ...»¹⁰⁵, — գրել է Ն. Մանդելշտամը:

«Փայտոնչին» բանաստեղծությունը նույնպես արժանացել է մանրագնին վերլուծության ու քննության, նկատվել է Ա. Պուշկինի քնարերգության, մասնավորապես «Ճանապարհորդություն դեպի Արգրում», «Խրախճանք ժանտախտի պահին», «Դևեր» գործերի մոտիվների հետ բացահայտ ասոցիացիա¹⁰⁶: Ուստի, ստորև միայն մի խոսու՜ն հատված բերենք «Փայտոնչին» բանաստեղծությունից.

¹⁰⁴ Օ. Մանդելշտամ. *Կարճ. գիրքը*, էջ 359:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 360: Ի դեպ, 1929–1930 թթ. Ղարաբաղում՝ Հաղբուլթում, այտուցային ժանտախտ է բռնկված եղել:

¹⁰⁶ Տե՛ս մասնավորապես՝ Դ. Յ. Хз м а л я н. «Фаэтонщик» — стихотворение О. Мандельштама о Нагорном Карабахе. — «Вестник Ереванского университета», 1991, № 1, с. 89–92.

... Ես Ղարաբաղը տեսա լեռնային,
Տեսա գիշատիչ Շուշի քաղաք,
Ուր ճաշակեցի սարսափներ մահի –
Հոգուս խռովքին համանվազ:

Քառասուն հազար մեռյալ լուսամուտ,
Ակնախոռոչներ մուլթ, սնամեջ.
Դառը տքնանքի բոժոժը հմուտ
Թաղված էր այնտեղ՝ լեռների մեջ:

Անամոթաբար շառագունում են
Մերկ տներն ու վեր նայում անթարթ,
Երկինքը վերից մեզն իր մանում է,
Որպես մուգ-կապույտ ոմն ժանտախտ¹⁰⁷:

¹⁰⁷ Օ. Մ ա ն դ ե լ չ տ ա մ. նշվ. գիրքը, էջ 153:

«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԱՐՁԱԿ ԵՐԿՆ ՈՒ ԴՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

1931–1932 թթ. Օ. Մանդելշտամը գրում է «Ճանապարհորդություն Հայաստան» էսսեն, որը հիմնականում պատմություն է Հայաստանի մասին, բայց և խորհրդածություն է մարդկության պատմության ու աշխարհի լեզուների, ֆրանսիական իմպրեսիոնիզմի, ֆիզիոլոգիայի և լուսավորության շուրջ: Իր այս գործը գրելու հանգամանքների, ընթացքի, դրա հետ կապված ապրումների մասին Մանդելշտամը 1931 թ. ապրիլին հորը գրել է. «Կան արդյոք ծրագրեր, հեռանկարներ: Իհարկե, կան: Ես քեզ կծանոթացնեմ իմ գրական չարչարանքներին: Հայաստանից հետո վերջերս ավարտած քնարերգության մեծ շարքը ոչ մի կոպեկ չբերեց ինձ: Ոչ մի բան չի կարելի տպագրել: (Ամսագրերի խմբագիրները տրնտնջում են և որոշում չեն ընդունում): Գովում են շատ ու ջերմ: Գրում եմ նաև արձակ, երկարատև ու տքնաջան զբաղմունք է, բայց այդ նույն պատճառներով ինձ հետ պայմանագրեր չեն կնքում ու կանխավճար չեն տալիս: Այդ ամենը պարզվեց կես խոսքից: Ես ամբողջովին հաշտվել եմ նման դրության հետ, ոչ մի տեղ ոչինչ չեմ առաջարկում, ոչ մի բանի մասին ոչ մի տեղ չեմ խնդրում ... Կարևորը, հայրիկ, գրական գործեր ստեղծելն է, իսկ որտեղ դրանք տեղավորել, միևնույն է ... Կենցաղային դատարկ բաների պատճառով գրիչս վայր չեմ դնում, աշխատելը ուրախ է և լավ»¹⁰⁸:

Մինչ «Ճանապարհորդություն Հայաստան»-ի տպագրությունը՝ 1933 թ. ապրիլի 5-ին, Օ. Մանդելշտամը Մ. Շահինյանին հասցեագրած վերը նշված նամակում էլ գրում է. «Սիրելի Մարիետա Սերգեևնա! Այս գործը, որը ուղարկում եմ ձեզ և ուզում եմ, որ դուք կարդաք, դեռևս չի տպագրվել (կլինի «Звезда»-ում և Լենինգրադ-

¹⁰⁸ Осип Мандельштам. Последние творческие годы. Стихи. Письма. Воспоминания о поэте. – «Новый мир», 1987, № 10, с. 204.

յան> հրատարակչությունում)¹⁰⁹, բայց այնպես պատահեց, որ այս գործը՝ այս ձեռագիրն արդեն աշխատում և շնչում է, ինչպես կենդանի մարդը, պատասխանում է, ինչպես ապրողներից ապրողը և դրա հետ մեկտեղ պայքարում է: Հիշում եք, Նրևանում ես ձեզնից վերցրեցի Գյոթեի հատորյակը և հոգվածիկ էինք կարդում 3. Կ. Ս.-ից (խոսքը Մանդելշտամի «Դարվինի գիտական ոճի պրոբլեմի մասին» վերնագրով հոդվածի մասին է, որ տպագրվել էր «За коммунистическое просвещение» թերթի 1932 թ. ապրիլի 21-ի համարում – Ա. Զ.), որտեղ ես և ձեր և իմ կողմից խոնարհվում էի «կենդանի» բնությունը: Ձեզ հետ մեր թուուցիկ հանդիպումների թեման և նույնիսկ Յակով Սամսոնիչի (նկատի ունի Մ. Շահինյանի ամուսնուն՝ Յա. Խաչատրյանցին – Ա. Զ.) միջոցով, ով կարողանում է և սիրում է լսել ձեզ համար (ինչպես հայտնի է, Մ. Շահինյանի լսողությունը շատ վատ էր – Ա. Զ.) միշտ եղել է իրականության պաշտպանությունը նրա մեռելածին սահմանումներից: Դուք միշտ ինձ հանդիմանում էիք այն բանի համար, որ ես չեմ լսում մատերիալիզմի կամ դիալեկտիկայի երաժշտությունը կամ միևնույն է ինչպես է անվանվում: Այդ իսկ խոսակցությունները շարունակվում են իմ «Ճանապարհորդությունում»: Նյութական աշխարհը՝ իրականությունը, ինչ-որ տրված բան չէ, բայց ծնվում է մեզ հետ: Այն բանի համար, որպեսզի տվյալը դառնա իրականություն, պետք է բառի իսկական իմաստով այն վերակենդանացնել: Դա էլ հենց գիտությունն է, դա էլ հենց արվեստն է: ...»¹¹⁰:

Իր նամակներից մեկում Օ. Մանդելշտամը գրել է. «Գրքույկս («Ճանապարհորդություն Հայաստան» – Ա. Զ.) խոսում է այն

¹⁰⁹ Մ. Շահինյանը Լենինգրադում գործող «Գրողների հրատարակչության» վարչության անդամներից էր: Նախապես որոշվել էր, որ «Ճանապարհորդություն Հայաստան»-ը պետք է հրատարակվի նաև գրքային տարբերակով, գտնվել է սրբագրական պրոցեսներում, սակայն, ստորև ներկայացվող բացասական կարծիքներից հետո հրատարակությունը սառեցվել է:

¹¹⁰ Օ. Э. Мандельштам и Б. С. Кузин. Материалы из архива, с. 131.

մասին, որ աչքը մտածողության միջոց-գործիք է, որ լույսը ուժ է և որ զարդաքանդակը միտք-գաղափար է: Դրանում խոսվում է բարեկամության, գիտության, ինտելեկտուալ կրքի մասին, այլ ոչ թե «իրերի»¹¹¹:

«Ճանապարհորդություն Հայաստան»-ը ևս բազմակողմանիորեն դիտարկվել ու մեկնաբանվել է, եղել են բազմաթիվ հրապարակումներ¹¹², այդ իսկ պատճառով բավարարվենք այդքանով:

Խնդրո առարկա էսսեն տպագրվել է Լենինգրադում լույս տեսնող «Звезда» ամսագրի 1933 թ. № 5-ում (էջ 103–125): Խմբագիրը՝ Յեզար Վոլպեն, ոչ միայն հրատարակել է այդ գործը, այլև տպագրել է գրաքննության կողմից Արշակ Թադավորի մասին հանված հատվածը, ում ասորեստանցին՝ Շապուհը, պահել էր խավար զնդանում, որտեղից ելք չկա և լուսաչերտ չի ընկնում. «... ասորեստանցին պահում է իմ սիրտը ...»¹¹³: Դրա համար Վոլպեին աշխատանքից ազատել են, բայց չեն ձերբակալել: «Правда» թերթում 1933 թ. օգոստոսի 30-ին «Մատենագիտություն» խորագրի ներքո այս երկի մասին տպագրվել էր «Հին Պետերբուրգի ստվերները» («Звезда», 1933 թվականի № 1–7) վերնագրով Ս. Ռոզենտալի խիստ բացասական կարծիքը: Դրա տպագրությունից հետո Օ. Մանդելշտամին խորհուրդ են տվել «հրաժարվել» «Ճանապարհորդություն Հայաստան» գործից. «Դեռևս չէր ավարտվել գղջումներով նամակների դարաշրջանը»¹¹⁴: Կարդալով «Правда»-ի նյութը՝ Օ. Մանդելշտամը դիմում է ՀամԿ(Բ) Կենտկոմ իր ծանոթներից մեկին: Վերջինս անմիջապես

¹¹¹ «Вопросы литературы» (М.), 1968, № 4, с. 191.

¹¹² Տե՛ս С. Т. Золян. Подражание как тип текста (об интерпретации двух армянских источников О. Мандельштамом и А. Ахматовой). — «Вестник Ереванского университета», 1986, № 1, с. 226–236; П. Нерлер. Заметки о «Путешествии в Армению» Осипа Мандельштама. — «Литературная Армения», 1987, № 10, с. 69–79; նաև՝ ծանոթ. 100-ում նշված աշխատանքները:

¹¹³ Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 335. Հմմտ. Н. Я. Мандельштам. Воспоминания, с. 301.

¹¹⁴ Н. Мандельштам. Вторая книга: ..., с. 341.

ընդունում է նրան՝ ակնկալելով, որ բանաստեղծը եկել է զղջումով, սակայն նա պարզապես հայտարարում է, որ չի կարելի կենտրոնական թերթերում տպագրել «գեղին մամուլին վայել հոգվածիկներ»։ «Մանդելշտամ, դուք խոսում եք «Правда»-ի մասին», — լինում է պատասխանը։ «Ես մեղավոր չեմ, որ հոգվածը տպագրվել է «Правда»-ում», — արձագանքում է Մանդելշտամը»¹¹⁵։

Ինչևէ. «Правда»-ի գրախոսն անխնա քննադատում է հին՝ «պետերբուրգյան շրջանի գրականության հետքերը, հին խավերի և գրական դպրոցների բեկորները մարմնավորող» գրողներին՝ Վ. Շկլովսկուն, Կ. Վազինովին, Ն. Զաբոլոցկուն, բայց հիմնական թիրախը Օ. Մանդելշտամն է։ «Օսիպ Մանդելշտամը կատարել է «ճանապարհորդություն Հայաստանում» և 1933 թվականին այդ մասին պատմել է «Звезда» ամսագրում։ ... Մանդելշտամի կերպարներից հին, նեխած, մեծապետական շովինիզմի հոտ է գալիս, որը, գովասանքներ չույլելով Հայաստանի մասին, գովաբանում է նրա էկզոտիկան, նրա ստրկական անցյալը, քանզի ներկայի մասին Մանդելշտամը ոչ մի տող չի գրել, — գրում է Ս. Ռոգենտալը։ — Այդպես «ճանապարհորդել» կարելի է տանը նստելով և քեզ շրջապատելով փորագրանկարներով, հին գրքերով ու հազվագյուտ հայկական հնություններով ... Կարելի է նողկանքով անցնել Բեզիմենսկու մասին Մանդելշտամի սրախոսությունների կողքից։ Դրանցում անգուսպ մարդու քեն կա, ով չի հասկանում պրոլետարական գրականությունը։ ... Այդպես խոսել ու գրել են և «ճանապարհորդել են» մինչ հեղափոխությունը «Վենի» բանաստեղծները, Ծովային փողոցի պանդոկների բանաստեղծները, մզլահոտ սալոնների բանաստեղծները, գրական «ուրբաթների» և «չորեքշաբթիների» հերոսները»։ «Պետերբուրգյան հին բանաստեղծ-ակմեիստ Օ. Մանդելշտամը, — շարունակում է հոգվածագիրը, — անցել է բուռն ծաղկող և ուրախ սոցիալիզմ կառուցող Հայաստանի կողքից։ ... Օ. Մանդելշտամի մասին կշտամբանքով է հնչում Մ. Սլոնիմսկու (սովետական արձակի ներկայացուցիչ — Ա. Զ.) կարծիքը։ ... Բանաստեղծ, ինչպես ասում են, առանց կենսափորձի, հանգստություն և

¹¹⁵ Նույն տեղում, էջ 342–343։

բարեկեցություն ձգտող, անտարբեր ամեն ինչի նկատմամբ, բացի իր անձից, դատապարտված է ամլության»։ Եվ վերջում՝ իբրև եզրակացություն. ««Звезда»-ն իր էջերում տպագրում է սովետական գրականության լավագույն գործերը։ Բայց ««Звезда»-ում դեռ շատ են մոռյլ, անպտուղ գրողները։ // Ամսագրին պետք է ամուր ձեռք, բոլշևիկյան աչք։ Պետք է կարողանալ վերադաստիարակել գրողներին, պետք է անողոր պայքարել դասակարգային չարակամ ստեղծագործությունների դեմ։ // Համարձակորեն առաջ քաշել բանվոր դասակարգի միջավայրից նոր գրողների»¹¹⁶։

Ընդհանուր առմամբ, գրախոսականն Օ. Մանդելշտամի վրա այնքան էլ ճնշող տպավորություն չի թողել. նա պարզապես աշխատել է մոռանալ դրա մասին, մինչդեռ այն սպառնալիք-նախազգուշացում էր։

Ինչպես գրում է Ն. Մանդելշտամը, «Հայաստանում արձագանքեցին այդ հոդվածին և բանաստեղծին մամուլում անվանեցին դաշնակ¹¹⁷։ Դա նշանակում էր, որ Հայաստանի մուտքն ընդմիջտ

¹¹⁶ С. Розенталь. Тени старого Петербурга («Звезда», № № 1–7 за 1933 год). – «Правда» (М.), 30. VIII. 1933. Նշենք, որ մինչ այդ՝ հունիսի 17-ին, «Ճանապարհորդություն Հայաստան»-ի մասին «Литературная газета»-ում տպագրվել էր Ն. Օրուժեյնիկովի նմանատիպ հոդվածը։

¹¹⁷ Մեր պրպտումները, սակայն, Հայաստանյան մամուլում նման արձագանք գտնելու համար, ապարդյուն անցան։ Նկատենք նաև, որ վերոգրյալով կարելի է բացատրել այն իրողությունը, որ, ինչպես վերը նշվեց, 1960-ական թվականների սկզբին ավագ սերնդի հայ և ոչ մի գրող չի հիշել Մանդելշտամի այցի ու հայկական թեմայով նրա գրած ստեղծագործությունների մասին, բացի Մարտիրոս Սարյանից ու նրա որդի Սարիկից։

Այս առնչությամբ նաև հավելենք. տարիներ անց՝ 1960-ականների վերջին–1970-ականների սկզբին, Հայաստանի գրական կյանքում «Հետաքրքիր, միաժամանակ տխուր դեպքեր են» արձանագրվել։ Ինչպես գրում է Գ. Կուբատյանը, «Литературная Армения» ամսագրի գլխավոր խմբագիրը, շատ հայտնի բանաստեղծը (անուն-ազգանունը չի նշում. խոսքը Գևորգ Էմինի մասին է, ով 1968-ից 1972 թվականն եղել է ամսագրի խմբագիրը) փարիզյան «Русская мысль»-ին տված հարցազրույցում

փակ է Մանդելշտամի առաջ, բայց մեկնելիս նա գիտեր, որ իրեն վիճակված չէ վերադառնալ»¹¹⁸։ Դրա առհավատչյան «Հայաստան» շարքից ստորև բերվող բանաստեղծությունն է.

Էլ երբեք քեզ չեմ նայի,
Հայոց կարճատես երկինք,
Էլ չեմ սեւեռվի կկոցած աչքերով
Ճամփորդի վրանին Արարատի,
Չեմ բացի այլևս երբեք
Կավագործ քերթողներիդ դարանում
Հրաշագեղ հողիդ մատյանը սնամեջ,
Որով ուսում են առել առաջին մարդիկ¹¹⁹։

ասել է, որ իրեն աշխատանքից ազատել են Օ. Մանդելշտամի գործերը տպագրելու համար (խոսքը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է այս նյութին՝ Դ. Эмин. [Предисловие]. – «Литературная Армения», 1967, № 3, с. 82–83), և որ Կենտրոնում իրեն համարել են «չկառավարվող»։ Բերվում են ասվածը ժխտող համոզիչ փաստարկներ։ Իրականությունը, սակայն, այն է, որ 1974 թ. աշխատանքից ազատել են «Литературная Армения»-ի աշխատակից Գ. Կուբատյանին, քանզի համարձակվել էր ամսագրում հրատարակել Օ. Մանդելշտամի մասին հոդված, որում մեջբերումներ էր կատարել բանաստեղծի անտիպ գործերից։ Դա միաժամանակ որակվել էր որպես «հայկական նացիոնալիզմ և սիոնիզմ» (Դ. Кубатян. Ворованный воздух. Статьи и заметки, с. 164)։ Հավելենք, որ Օ. Մանդելշտամի մահվան 60-ամյակի առթիվ 1998 թ., Գ. Կուբատյանը գրել է «Похититель воздуха, или где эта улица?» վերնագրով Մանդելշտամ-բանաստեղծի կերպարն ամբողջացնող ուշագրավ խոսք (տես նույն տեղում, էջ 418–421)։

¹¹⁸ Н. Мандельштам. Вторая книга:..., с. 344.

¹¹⁹ Օ. Մանդելշտամ. Նշվ. գիրքը, էջ 138:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Օսիպ Մանդելշտամը XX դարի ուռու գրականությունից ինքնատիպ ու հետաքրքիր երախտավորներից է՝ հակասական ու բարդ ճակատագրով: Նրա կյանքն ու գրական ճանապարհը եղել է տատասկոտ՝ վերելքներով և վայրէջքներով:

«Մանդելշտամը միշտ՝ իր ողջ կյանքում, ձգտում էր դեպի հարավ, դեպի Սև ծովի ափերը, միջերկրածովյան ավազան: Սկզբում նա ճանաչեց Ղրիմը, և սիրեց արևելյան ափը, հետո, քսան թվին, եղավ Կովկասում ... Բսանմեկ թվականին նա արդեն ինձ հետ կես տարի անցկացրեց Վրաստանում, իսկ երեսունին մենք մայիսից մինչև նոյեմբեր (հոկտեմբերի սկիզբը – Ա. Զ.) ապրեցինք Հայաստանում և Թիֆլիսում, որտեղ երկարատև լուսթյունից հետո նրան վերադարձավ պոեզիան: Ես խոսում եմ իրական ճանապարհորդությունների, այլ ոչ թե առողջարանային ուղևորությունների մասին, որոնք եղել են շատ ավելի:

Միջերկրածովյան ավազանը, Ղրիմը, Կովկասը Մանդելշտամի համար եղել են պատմական երկիր, գիրք, «որով սովորել են առաջին մարդիկ»: Մանդելշտամի համար պատմական աշխարհը սահմանափակվում էր քրիստոնեությունը դավանող ժողովուրդներով, և Հայաստանը նա ընկալում էր որպես ֆորպոստ՝ «աշխարհի եզրին» («Բոլոր ցայգերին օրերիդ դու աշխարհի եզրին – // Արցունքդ կլլելով՝ կանգուն ես մնացել: // Երեսդ թեքել ես ամոթով ու վշտով // Մորուքավոր քաղաքներից Արևելքի») ... Այդ տարիներին մենք ամեն մի քայլին տեսել ենք մուսավաթական ջարդերի հետքերը (հենց միայն Շուշին ...), և դա խորացնում էր օտար մարդկանցով ու երկրներով չըջապատված ծայրամասի զգացողությունը: Հայաստանի մասին բանաստեղծություններում անսպասելիորեն սողոսկեց վերջի, կործանման, ավար-

տի թեման. «Եվ քեզնից հանում են ծեփապատկերդ հետմահու» (ընդգծումը մերն է– Ա. Զ.)»¹²⁰:

Միով բանիվ՝ Հայաստանից ստացած անջնջելի տպավորությունը խորապես արտացոլվել է Մանդելշտամի քնարերգության մեջ և արձակում: Հայկական թեման դարձավ շաղկապված բազմաթիվ մտորումների՝ մարդկության պատմության և պատմական գիտակցության, աշխարհի պատկերացումների, հնագույն մշակույթների մասին հանգուցակետ:

Հայաստան կատարած այցելությունն Օ. Մանդելշտամի կյանքի ամենալուսավոր էջերից է եղել: Բիբլիական երկրի հետ ծանոթությունից ծնված բանաստեղծություններն ու արձակը ուսուցողականության մեջ Հայաստանի մասին զրված լավագույն գործերից են:

¹²⁰ Н. Мандельштам. Вторая книга:..., с. 381.

ОСИП МАНДЕЛЬШТАМ: ПОЭТ И АРМЕНИЯ

АНУШАВАН ЗАКАРЯН

Р е з ю м е

Видный русский (по происхождению – еврей) поэт, теоретик искусства, переводчик Осип Эмильевич Мандельштам (1891–1938) занимает особое место в истории советской литературы.

В 1920–1930-х годах Мандельштам, будучи беспартийным и не состоящий постоянно ни в одном литературном объединении, вкусил все горести, которые выпали на долю интеллигенции его поколения и многих рядовых советских граждан: подвергся репрессиям, дважды был арестован, отправлен в ссылку, где и скончался.

Имя О. Мандельштама тесно связано с Арменией и армянской культурой. Посещение Армении (с мая до начала октября 1930 г.) стало для него судьбоносным: под неизгладимыми впечатлениями от библейской страны он написал цикл стихотворений «Армения» (1931 г.) и эссе «Путешествие в Армению» (1933 г.). Эти произведения являются одними из лучших страниц русской литературы, посвященной Армении.

О жизни и творчестве О. Мандельштама имеется богатая литература: воспоминания современников, множество монографий, статей, публикаций. Однако на армянском языке почти отсутствуют исследования о Мандельштаме: настоящая книга частично восполняет этот пробел.

OSIP MANDELSTAM: THE POET AND ARMENIA

ANUSHAVAN ZAKARYAN

Summary

Osip Mandelstam (1891–1938) – a prominent Russian poet (Jewish by origin), art theorist, translator – takes a special place in the history of the Soviet literature.

In the 1920–1930s, Mandelstam, being non-party man and not constantly being member of any literary association, tasted all the misfortunes that befell the intellectual class of his generation and great many ordinary Soviet citizens; he faced repressions, he was arrested twice, was sent into exile where he died.

Mandelstam's name is closely related to Armenia and Armenian culture. His visit to Armenia (from May to early October, 1930) was life-changing for him. Under the indelible impressions of the biblical country, he wrote a collection of poems “Armenia” (1931) and an essay “Journey to Armenia” (1933). These pieces of art are among the best works in the Russian literature dedicated to Armenia.

There is rich literature on Mandelstam's life and art: memoirs of contemporaries, a great number of monographs, articles and publications. Nevertheless, there are almost no studies about Mandelstam in the Armenian language: the present volume partially fills this gap.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹ

Հայաստանի Հանրապետության գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հուլային բաժին, Կարա-Դարվիշի ֆոնդ, արխիվ 597:

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Գրքեր, ժողովածուներ

Զաքարյան Ա. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում, Երևան, 2010:

Զաքարյան Ա. Իլյա Էրենբուրգի թիֆլիսյան օրերը, Երևան, 2012 (Հայերեն և ռուսերեն):

Մանգելշտամ Օ. Բանաստեղծություններ, արձակ: Թարգմ. ռուսերենից՝ Հրաչյա Բեյլերյանի, Երևան, 2012:

Սայիյան Ա. Արարատի 1926–1930 թթ. ապստամբությունը թուրք-քրդական և հայ-քրդական հարաբերությունների ու տարածաշրջանային զարգացումների համաձիրրում, Երևան, 2017:

Սևյան Վ. Ծոռի, Երևան, 1991:

Андреева М. Р. Армянские фрески Осипа Мандельштама. Ереван, 2001.

Армения по Мандельштаму. Армянская фотография 1878–1920 гг. Альбом-каталог. Ереван, 2016.

Видгоф Л. «Но люблю мою курву—Москву»: Осип Мандельштам: поэт и город. Книга—экскурсия. М., 2012.

Гаспаров М. Л. О. Мандельштам: гражданская лирика 1937 года. М., 1996.

Гинзбург Л. Я. О старом и новом. Статьи и очерки. Л., 1982.

Головин В. «Над Курою в ущелье балконном». Осип Мандельштам. Тбилиси, 2016.

Гроссман В. Добро вам! Рассказы. М., 1967, с. 210.

Гуайта Дж. Крик с Арарата: Армин Вегнер и геноцид армян. М., 2005.

Закарян А. Александр Кулебякин и Армения. Ереван, 2003.

Закарян А. Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916–1921 гг.). Ереван, 2015.

Закарян А. Тифлисский «Цех поэтов» Сергея Городецкого и сборник «Акмэ». Ереван, 2011.

Жизнь и творчество О. Э. Мандельштама. Воспоминания, материалы к биографии, «новые стихи», комментарии, исследования. Воронеж, 1990.

Ивнев Р. У подножия Мтацминды. Мемуары. Новеллы разных лет. Повесть. М., 1973.

Ивнев Р. Образ, временем сожженный. Стихотворения: 1904–1981. М., 1991.

Коэн С. Бухарин. Политическая биография. 1888–1938. Пер. с англ. Е. Четвергова, Ю. Четвергова, В. Козловского. Общая редакция и послесловие д. и. н. И. Е. Горелова. М., 1992.

Кубатьян Г. Ворованный воздух. Статьи и заметки. Ереван, 2005.

Лекманов О. Жизнь Осипа Мандельштама. Документальное повествование. СПб., 2003.

Липкин С. И. Угль, пылающий огнем. М., 1997.

Мандельштам Н. Вторая книга: воспоминания. Подготовка текста, предислов., примеч. М. К. Поливанова. М., 1990.

Мандельштам Н. Я. Воспоминания. М., 1989.

Мандельштам О. Личность. Творчество. Эпоха. Автор предисл. д. ф. н., проф. Н. И. Великая. Владивосток, 1989.

Мандельштам О. Стихотворения, проза, записные книжки. Вступ. статья, сост., коммент. Н. А. Гончар-Ханджян. Ереван, 1989.

Мандельштам О. Шум времени: стихотворения, проза. Иркутск, 1991.

Мец А. Г. Осип Мандельштам и его время. Анализ текстов. СПб., 2005.

Нерлер П. М. Слово и «дело» Осипа Мандельштама. Книга доносов, допросов и обвинительных заключений. При участии Д. И. Зубарева и И. Л. Побоя. М., 2010.

Слово и судьба. Осип Мандельштам: исследования и материалы. М., 1991.

Смерть и бессмертие поэта. Материалы международной научной конференции, посвященной 60-летию со дня гибели О. Э. Мандельштама (Москва, 28–29 декабря 1998 года). М., 2001.

Шагинян М. Советское Закавказье. Очерки 1922–1930. Л.–М., 1931.

Штемпель Н. Е. Мандельштам в Воронеже. Воспоминания. М., 1992.

Эренбург И. Люди, годы, жизнь, кн. 1 и 2. М., 1961.

բ) Հոգևածներ

Ավերինյե Ա. Օսիպ Մանդելշտամի ճակատագիրն ու արվեստը.— Օ. Մանդելշտամ. Բանաստեղծություններ, արձակ: Թարգմ. ռուսերենից՝ Հրաչյա Բեյլերյանի, Երևան, 2012, էջ 5–45:

Զաքարյան Ա. Օսիպ Մանդելշտամ. բանաստեղծը և ժամանակը: Հայաստանը նրա կյանքում.— ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2021, № 2, էջ 46–87:

Ղազարյան Ռ. Մամիկոն Գևորգյան.— ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2008, № 3, էջ 295–302:

Զարենց Ա. Ե. Զարենցի անտիպ նամակը Մ. ՇաՀինյանին. — ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 1987, № 2, էջ 226–230:

Андреева М. Р. Армянские фрески Осипа Мандельштама.— «Вестник Ереванского университета», 1995, № 1, с. 67–77.

Андреева М. Р. Пушкинские мотивы в стихотворной «Армении» О. Мандельштама.— «Вестник Ереванского университета», 1999, № 2, с. 63–70.

Герштейн Э. Новое о Мандельштаме. — «Наше наследие», вып. V. М., 1989 с. 101–124.

Гончар Н. А., Андреева М. Р. О некоторых ключевых образах цикла «Армения» О. Мандельштама.— «Вестник Ереванского университета», 1996, № 2, с. 82–93.

Гончар-Ханджян Н. А. Мандельштам и Армения.— О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки. Вступ. статья, сост., коммент. Н. А. Гончар-Ханджян. Ереван, 1989, с. 5–11.

Гордин В. Л. Мандельштамовский Воронеж. — Жизнь и творчество О. Э. Мандельштама. Воспоминания, материалы к био-

графии, «новые стихи», комментарии, исследования. Воронеж, 1990, 53–60.

Закарян А. Деятельность тифлисского «Цеха поэтов». – «Историко-филологический журнал» НАН РА, 2011, № 2, с. 113–130.

Золян С. Т. Подражание как тип текста (об интерпретации двух армянских источников О. Мандельштамом и А. Ахматовой). – «Вестник Ереванского университета», 1986, № 1, с. 226–236.

Казинян А. Товар из языческой разграбленной лавки. – «Голос Армении», 26. II. 2002.

Кубатьян Г. Солнечные часы поэзии. Армянская тема в творчестве О. Э. Мандельштама. – «Литературная Армения», 1974, № 10, с. 103–116.

Кубатьян Г. И. Место армянской темы в творчестве О. Мандельштама (Уроки Армении). – «Вестник Ереванского университета», 1989, № 2, с. 11–20.

Кубатьян Г. Стихотворение и цикл (две ипостаси Армении в поэзии О. Мандельштама). – «Вестник Ереванского университета», 1991, № 1, с. 79–88.

Кубатьян Г. После интермедии, или мало о них было линейного. Египше Чаренц и Осип Мандельштам. – В кн. Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки. Ереван, 2005, с. 71–87.

Кубатьян Г. От слова до слова. Комментарий к циклу О. Мандельштама «Армения». – В кн.: Г. Кубатьян. Ворованный воздух. Статьи и заметки. Ереван, 2005, с. 7–66.

Кузин Б. С. Об О. Э. Мандельштаме. – «Вопросы истории естествознания и техники» (М.), 1987, № 3, с. 133–144.

Мандельштам О. Записные книжки. Заметки. – «Вопросы литературы» (М.), 1968, № 4, с. 180–204.

Мандельштам О. Э. и Кузин Б. С. Материалы из архива. – «Вопросы истории естествознания и техники» (М.), 1987, № 3, с. 127–144.

Мкртчян Л. М. “... И каждое слово – скоба”. – Л. М. Мкртчян. Слепой, но не настолько. Художественная публицистика. Литературная критика. Ереван, 1998, с. 220–225.

Нерлер П. Заметки о «Путешествии в Армению» Осипа Мандельштама. – «Литературная Армения», 1987, № 10, с. 69–79.

Осип Мандельштам. Последние творческие годы. Стихи. Письма. Воспоминания о поэте. – «Новый мир», 1987, № 10, с. 194–236.

Поэт и власть. Несколько малоизвестных эпизодов из жизни Осипа Мандельштама. – «Литературная газета» (М.), № 19, 12–18 мая 2021, с. 17.

Розенталь С. Тени старого Петербурга («Звезда», № № 1–7 за 1933 год). – «Правда» (М.), 30. VIII. 1933.

Семенко И. М. Ранние редакции и варианты цикла «Армения». – В кн.: О. Мандельштам. Стихотворения, проза, записные книжки. Вступ. статья, сост., коммент. Н. А. Гончар-Ханджян. Ереван, 1989, с. 89–111.

Хзмалян Т. Э. «Фазтонщик» – стихотворение О. Мандельштама о Нагорном Карабахе. – «Вестник Ереванского университета», 1991, № 1, с. 89–92.

Хрупкость и бесстрашие жизни. К 130-летию со дня рождения Осипа Мандельштама. Беседа Юлия Могулевцева с председателем Мандельштамовского общества Павлом Нерлером. – «Литературная газета» (М.), № 1–2, 13–19 января 2021, с. 13.

Эмин Г. [Предисловие].– «Литературная Армения», 1967, № 3, с. 82–83.

Яковлева М.. Комната для поэта. В Москве открылась постоянная экспозиция «Улица Мандельштама: Осип и Надежда». – «Литературная газета», № 11, 17–23 марта 2021, с. 1; 29.

3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ա) ԹԵՐԹԵՐ

«Голос Армении», 2002.

«Литературная газета» (М.), 1929; 1933; 2021.

«Правда» (М.), 1933.

«Слово» (Тифлис), 1920.

«Фигаро» (Тифлис), 1921.

բ) ԱՃՍԱԳՐԵՐ

ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 1987, 2008, 2021:

«Вестник Ереванского университета», 1974; 1986; 1989; 1991; 1995; 1996; 1999.

- «Вопросы истории естествознания и техники» (М.), 1987.
«Вопросы литературы» (М.), 1968.
«Звезда» (Л.), 1933.
«Историко-филологический журнал» НАН РА, 2011.
«Литературная Армения», 1966; 1967; 1974; 1987.
«Наше наследие» (М.), 1989.
«Новый мир» (М.), 1931; 1987.
«Пламя» (Тифлис), 1921.
«Радуга» (Таллин), 1988.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	7
ԳԼՈՒԽ 1	
0. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԻ ԿՅԱՆՔԻ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ	10
ԳԼՈՒԽ 2	
0. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՎ ԲԱՔՎՈՒՄ	30
ԳԼՈՒԽ 3	
0. ՄԱՆԴԵԼՇՏԱՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	40
ԳԼՈՒԽ 4	
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՇՈՒՇԻՈՒՄ	55
ԳԼՈՒԽ 5	
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԸ: ԹԻՖԼԻՍՅԱՆ ՕՐԵՐԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ	59
ԳԼՈՒԽ 6	
«ՖԱՅՏՈՆՁԻՆ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԸ	63
ԳԼՈՒԽ 7	
«ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՐՁԱԿ ԵՐԿՆ ՈՒ ԴՐԱ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ	65
ՎԵՐՁԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ	71
PE3IOME	73
SAMMARY.....	74
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	75

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՕՍԻՊ ՄԱՆԴԵԼՇՏԱՄ.
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Կազմի ձևավորումը՝
արվեստագիտություն թեկնածու, դոցենտ
Մարտին Հարությունյանի

Շարվածքը և էջադրումը՝
Գոհար Հովհաննիսյանի

Տպագրական 5,25 մամուլ: Չափսը՝ $60 \times 84^{1/16}$:
Թուղթը՝ օֆսեթ № 1: Տպաքանակը՝ 100:

Տպագրվել է «Ինֆոկոպի» ՍՊԸ տպագրատանը:

